


323.1(47)

5148

Պ-26

ՌՈՒՐԷՆ ԳԱՐԲԻՆԵԱՆ




8787

1041

# ՌՈՒՍԱԿԱՆ ՎՏԱՆԳԸ

(Արտատպւած «Յրտաջ» Թերթից)



Էլէկտրօ-տպարան «ՌԻՐԱՐԴԻԱ»

1 9 2 0



105766 - UZ

546-2009

ՌՈՒՍԱԿԱՆ ԱՆՍՏԱՆԻ ԿՐԿՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ



ԵՐԿՐԻ ՃԱԳԱՏՆԵՐ

Ամեն մի ազգութիւն գոյութիւն ունի այն չափով, որ չափով որ հակադրում է ինքն իրան ուրիշ, մտնաւանդ հարեան ազգերին: Ամեն մի ազգութեան ինքնորոշումը այն չափով է խորը և հաստատուն, որ չափով որ նրա ազատագրութիւնը տիրող ազգերի լծից կրում է ոչ միայն քաղաքական ու տնտեսական, այլ և մտաւոր ու բարոյական բնոյթ:

Հայ ազգն իր պատմութեան վերջին շրջանում եղել է երկու մեծ ժողովուրդների՝ ռուսի և թուրքի լուծի տակ և հզօրապէս ենթարկւել է նաև նրանց մտաւոր ու բարոյական ազդեցութեան:

Բնական է, որ հայութեան ազատագրական պայքարը պիտի մղէր այդ երկու ճակատների վրայ: Մինչդեռ, մի կողմից՝ քաղաքական պայմաները, միւս կողմից՝ հայ ժողովրդի սահմանափակ ոյժերը թոյլ չէին տալիս, որ այդ պայքարը լինէր երկու ճակատների վրա էլ միաժամանակ և միևնոյն թափով:

Մինչև վերջին ժամանակ հայութիւնն իրօք կուէր է միայն մէկ ճակատի, թուրքական ճակատի վրա:

Այս ճակատի վրա է միայն, որ հայ ժողովուրդը հրապարակ է եկել իր բոլոր ոյժերով ու զէնքերով—թէ փրկիքական, թէ մտաւոր, թէ բարոյական:

Այստեղ է, որ նա գրաւել է իր ազգային ինքնապաշտպանութեան հասարակական բոլոր դիրքերը:

Այստեղ է, որ նա կտաւրել է հիմնական վերագնահատութիւն բոլոր պատմական արժէքների:

Այստեղ է վերջապէս, որ նա ճշդել ու ձևակերպել է յասակօրէն իր տեսակէտները, թօթափել է իր վրայից իր թշնամու ազդեցութիւնները, մշակել է մի կուս, անյողդողդ համոզում իր թշնամու մասին և հանդէս է եկել իբրև մի ազգային ամբողջական զգացում, միտք և կամք:

Յնորհիւ հայի և թուրքի կրօնի մեծ տարբերութեան, ինչպէս նաև շնորհիւ թուրք ցեղի կուլտուրական յետաձուլութեան, հայ ժողովրդի և մանաւանդ հայ ինտելիգենցիայի մատուցուած քարոյշական ազատագրումը թուրքական ազգեցութիւնից կատարել է համեմատաբար գիւրիւն կերպով և արագ:

Թուրքը ճնշել է հային գերազանցապէս իր Ֆիզիքական դոքտրինով, իր քաղաքական կազմակերպութեամբ: Այդ պատճառով հայ ազատագրական կռիւը թուրքի դէմ կրել է գերազանցապէս ֆիզիքական և քաղաքական բնոյթ: Բոլորովին տարբեր պատկեր է ներկայացնում հայ ժողովուրդի ազգային պայքարի երկրորդ մեծ ճակատը՝ ուսուսական ճակատը:

Կրօնական մեծ տարբերութիւն հայ և ուսու ժողովուրդների միջև չի եղել, ինչպէս նաև չի եղել կուլտուրաների խոշոր տարբերութիւն:

Ռուս ազգը յանձին իր պետութեան ոչ միայն նւաճել էր Ֆիզիքապէս հայ ժողովրդի մի մեծ հատւածը, ոչ միայն ճնշում էր այն քաղաքականապէս, այլ ամեն ջանք էր թափում տարրալուծելու հայ ազգութիւնը, ձուլելու այն իր մէջ և կուլտուրապէս ու բարոյապէս դիմազուրկ անելու:

Ռուս պետութեան այս հայախորժան քաղաքականութեան նպաստում էին մեծապէս և մեր երկրի տնտեսական պայմանները, որոնց շնորհիւ հայ բուրժուազիան և հայ ինտելիգենցիան դուրս էին եկել իրենց հայրենիքի սահմաններից և կենտրոնացել օտար վայրերում՝ Թիֆլիս, Բագու, Մօսկւա...

Կտրւած իրենց հայրենի հողից և հարազատ ժողովրդից՝ հայ ինտելիգենցիան և հայ բուրժուազիան յարաճուճօրէն ենթարկւում էին այլասերման, օտարացման, բարոյալքման: Աստիճանաբար, միշտ աւելի սպառնական չափերով ուսական ոգին, ուսական կուլտուրան իր տիրական դրոշմն էր դնում հայ ինտելիգենցիայի և հայ բուրժուազիայի մտքի ու զգացմունքների վրա:

Եւ պատմութեան դառն հեզնանքով մեր ազգի ուսահայ հատւածի ամենաբարեկեցիկ և ուսեալ տարրերը, որոնք ուրիշ ազգերի մէջ սովորաբար ազգային կուլտուրայի գլխաւոր մշակներն և սպասուորներն են լինում, մեզ մօտ հետզհետէ կորցնում էին իրենց ազգային դիմագիծը, իրենց բնական կապերը

Տարազատ ժողովրդի հետ. անգիմադրելիօրէն առդարւում էին օտար գազափարներով, օտար տրամադրութիւններով ու օտար մշտումներով:

Բնական է, որ այս հանգամանքը մահացու հարւած էր հասցնում մեր ազգային ուրոյն կուլտուրայի զարգացման:

Այս է պատճառը, որ մեր բարձր դասերի ազգեցութիւնը մեր ժողովրդի աշխատաւորական զանգւածների վրա ազգային տեսակետով եղել է բացասական, քայքայիչ, այլասերող: Աւելի կամ նւազ չափով առւսացել է հոգեպէս ուռտահայ ինտելիգենցիան և իր հերթին ուռւացման է ձգտել ենթարկելու նաև հայ աշխատաւորութիւնը, որքան որ նա ազգեցութիւն է ունեցել վերջինիս վրա:

Հայ ինտելիգենցիան և հայ բուրժուազիան մեզ մօտ եղել են իրօք առւսական կուլտուրայի, սուս լեզւի տարածողը և քարոզողը:

Եւ այսպէս աստիճանաբար, յարաճունօրէն հայ ժողովրդի առջև ծառայել է մի մեծ վատնագ—ուռւացման վատնողը:

Հայ քաղաքական դեկավար շրջանները, ստիպւած լինելով ուղղել իրենց բովանդակ ոյժերը թուրքական հակառակ վրա, յանկարծ դարհուրանքով նկատել են այդ վատնողը և զգացել են, թէ իր աստիճան անպաշտպան է մնացել հայ ժողովուրդի թիկունքը—ուռւսական հակառակը:

Հայ ծխական դպրոցների փակումը, հայ եկեղեցական կալւածների գրաւումը և առհասարակ ամբողջ գօլիցիինեան ուժիմը հանդիսացան սթափեցնող ազդակներ հայ ազգի ինքնագիտակցութեան համար նաև Հիւսիսի հանդէպ:

Սակայն առւսական տիրապետութիւնն այնքան խորը արմատներ էր դրել հայ ժողովուրդի հոգու մէջ, այնքան էր ապազգայնացրել նրա վերին խաւերը և այնքան էր ընդարմացրել հայ քաղաքական միտքը, որ ծայր տւաւ մի յեղափոխական կռիւ ոչ թէ առւս պետութեան, այլ առւսական ուժիմի դէմ: Չափազանց բնորոշ է, որ անգամ համաշխարհային պատերազմի նախօրեակին և այդ պատերազմի ընթացքում, երբ փոքր ազգերի ազատագրման խնդիրն այնքան հրամառապ կերպարանք էր ստացել, մեր հանրային կեանքում առաջ չեկաւ որեէ քաղաքական հոսանք ընդդէմ առւս պետութեան: Թուսամոլութիւնն այն աստիճան կուրացրել էր մեր աչքերը, Թուսաստանի գորութիւնն

այնքան էր կաշկանդել մեր քաղաքական միտքը, որ մենք, կար-  
ծես, գրկեիլ էինք ընդունակութիւնից դատելու հայ ազգի և Հաս-  
տատանի շահերը ուս ժողովրդի և Ռուսաստանի շահերից:

Եւ կարելի է առանց չափազանցնելու ասել, թէ սուսական-  
այն յսխունն օրիհնտացիան, որ մենք ընդգրկել էինք ազգովին,  
ոչ թէ արդիւնք էր սէալ քաղաքական մտածողութեան կամ հա-  
շիւների, այլ մի անյաղթելի հասարակական պսիխոզ էր, մաս-  
սայական խենթութիւն:

Մենք եղել ենք աւելի ուսասէր, քան իրենք ուսաները:  
Մենք կուեի ենք Ռուսաստանի համար աւելի մեծ անձնւիրու-  
թեամբ և անվերապահութեամբ, քան ինքը ուս ժողովուրդը: Տը-  
ւել ենք ուս պետութեան համար անթիւ զօհեր, կրել ենք ան-  
չափելի վնասներ: Եւ այդ բոլորն արել ենք այն միամիտ հաւա-  
տով, որ մենք կատարում ենք միաժամանակ հայկական գործ:

Ճիշտ է, մենք ունեցանք մոայլ տարակուսանքի և սպանիչ  
հիասթափման զգայացունց վայրկեաններ: Ճիշտ է, մենք զգա-  
ցինք, անգամ գիտակցեցինք մեր շատ սխալները և փորձեր ա-  
րինք վերագնահատութեան ենթարկելու մեր ազգային քաղա-  
քական ընթացքը և ճշտելու մեր նոր անելիքը: Սակայն հայ ժո-  
ղովրդի կաշկանդեամբ քաղաքական միտքը վարանումով կանգ ա-  
ռաւ կէս ճանապարհի վրա՝ առանց թօթափել կարողանալու իր  
վրայից ուս պետութեան ճշող ծանրութիւնը:

Իրերի անխուսափելի, երկաթէ ընթացքն էր, որ ուղղու-  
թիւն էր տալիս մեր հասարակական մտքին, որը միշտ յիտ էր  
մնում զէպքերից, միշտ փսստերը արձանագլոդի և ոչ թէ կան-  
կանխատեսողի դեր էր կատարում:

Մեր քաղաքական միտքը կոյր էր հանդէպ սուսական ճա-  
կառի, մեր քաղաքական բնագոյը իրերի սատական բերումով  
անդամալուծւած էր սուսական վտանգի հանդէպ, և մենք չէինք  
էլ գիտակցում, թէ որպիսի մեծ թշնամի էր թողնում մեր հայ-  
բնիքի սահմանները և թէ որպիսի մեծ շօրիքից էր ազատում  
հայ ազգն իր ինքնորոշման ճանապարհի վրա: Ռուսից բաժան-  
ւելով, մենք զգում էինք մեր ազգային մարմնի մէջ մի խորը  
ցաւ, բայց չէինք գիտակցում, թէ այդ ցաւը վերահատուցիւնից  
(օպերացիայից) սոաջ եկած էաւ էր, որ սզատում էր մեր սզգը  
մի մեծ ներքին իոցից և սկիզբն էր դնում մեր ազգային ինք-  
նարուժման և իսկական ինքնորոշման:

Անցաւ երկու տարի: Մենք ստեղծեցինք անկախ և ազատ Հայաստան: Բայց մեր քաղաքական միտքը մնաց առաջւայ պէս գրեթէ անազատ և կախեալ ուսական գերութիւնից:

Եւ այսպէս, երբ Ռուսաստանը այժմ նորէն է բաղխում մեր դռները և յանցաւոր միջոցներով նորէն է ճզնում զոհարերկ մեր ժողովուրդն իր աշխարհակալ նպատակներին, մեր շարքերում կան մարդիկ, որոնք կարծէք ինչ որ տատանումներն են ենթակայ:

Եւ այդ այդպէս է ոչ թէ այն պատճառով, որ մենք բաւականաչափ ուղղմական ոյժ չունենք պատուով դիմագրաւելու համար ուսական վտանգը (որովհետև այդ վտանգը ոռոգմական տեսակէտով շատ չնչին է և Ռուսաստանի ներկայ միջազգային և ներքին վիճակում չի կարող չնչին չը լինել), այլ այն պատճառով, որ ուսական վտանգը մեզ համար գերազանցապէս հոգերանական բնոյթ ունի: Նա ոչ թէ սահմանների վրա է միայն, այլ մեր ներսում, մեր հոգու խորքում:

Վտանգը նրանումն է, որ ուսական թշնամին մեր մտքի, մեր սրտի, մեր կամքի մէջն է և մեր հոգու ներսից է կարծես ջլատում մեր դիմադրական կարողութիւնները, ներսից է սպառնում մեր ինքնուրոյնութեան և անկախութեան:

Եւ նկատի ունենալով այն, որ մեր ազգային ինքնիշխան և ազատ գոյութեան համար ներկայ պայմաններում չկայ աւելի վտանգաւոր թշնամի, քան ուսն է, մենք պարտաւոր ենք հաւաքել, լարել մեր բոլոր ոյժերը կուելու համար ուսական ճակատի վրա: Մենք պիտի անողոր պայքար մղենք ոչ միայն մեր սահմանների վրա, այլ և մեր հոգու մէջ այն բոլոր ուսական տարրերի դէմ, որ ընդարմացնում են մեր միտքը և կասեցնում մեր կամքը: Մենք պիտի մաքրենք մեր հոգին ուսական ազդեցութիւններից, — գաղափարներից, մղումներից, տրամադրութիւններից, պատրանքներից, հիւանդութիւններից:

Ռուսական ճակատի վրա ևս, ինչպէս երկար ժամանակ թուրքական ճակատի վրա, մենք պիտի հանդէս գանք մեր բովանդակ ազգային ոյժով — թէ ֆիզիքական, թէ մտաւոր, թէ բարոյական: Ազգովին մենք պիտի ներշնչւենք այն անդրդուելի դիտակցութեամբ, որ ուսն էլ մեր թշնամին է, քանի որ նա չի կամենում հաշուել Միացեալ և Անկախ Հայաստանի գոյութեան հետ, և որ մենք կարող ենք կուել և պէտք է կուենք նրա դէմ:

էլնոյնքան սեղմ շարքերով ու անվեհերապահութեամբ, որքան  
թուրքերի դէմ, քանի որ նա յանդգնում է խախտել մեր ազգի  
արդէն ինքնորոշւած ազատ կամքը: 11

## ՄՕՆՂՈՒԱԿԱՆ ԵՒ ՍԼԱԻՈՆԱԿԱՆ ՏԱՐԵՐԲԸ

Հայաստանի քաղաքական անկախութիւնը և հայ ժողովրդի ազ-  
գային ինքնորոշումն ապահովելու համար անհրաժեշտ է մեր  
կեանքի բոլոր ասպարէզներում արմատախիլ անել այն գերա-  
զանցապէս բացասական հետքերը, որ թողել է մէկ դարու ուռ-  
սական տիրապետութիւնը:

Ռուսաստանն այսօր պիտի մերժւի մեր կողմից ոչ միայն  
իրև քաղաքական զօրութիւն և քաղաքական սիտանմ, այլ և  
իրև կուլտուրական ազդեցութիւն, կուլտուրական արժէք:

Որպէս քաղաքական զօրութիւն, Ռուսաստանը գուրս է ըն-  
կել այսօր աշխարհիս բողոք որոշող մեծ պետութեանց շարքից.  
այնքան է կազմալուծւած տնտեսապէս և անդամալուծւած ներ-  
քին հակամարտ ոյժերի անհաշտ կուլից, որ երկար ժամանակի  
ընթացքում ոչ միայն ի վիճակի չպիտի լինի տեսականօրէն և  
տիրականօրէն ազդելու իր սահմանների վրա գանձող և իր բըւ-  
նապետական լուծից ազատագրւած կամ ազատագրւող ազգերի  
քաղաքական ճակատագրի վրա, այլ և հազիւ թէ ուժ ունենայ պահ-  
պանելու իր մայր հայրենիքի կառարեալ անկախութիւնը, ուստի  
ազգի պատմական սահմանների անձեռնմխելիութիւնը:

Ռուսաստանին այսօր սպառնում է Տաճկաստանին վիճակ-  
ւած բողոք: Այդ տխուր ու թերևս անխուսափելի ճակատագրի  
դէմ է որ կււում է ուստի ազգը ներկայումս: Ռուսական աշխար-  
հակալութիւնը մահւան է դատաւարուած, ինչպէս և թուրքա-  
կանը:

Միջազգային ոյժերի փոխարարութեանց արգի շրջա-  
նում Ռուսաստանը, ինչպէս և Տաճկաստանը, կարող է հաստա-  
տել իր գոյութիւնը և ճանաչել մեծ պետութեանց կողմից՝ իր-  
րև մի սոսկ ազգային պետութիւն: Ռուսաստանը չպիտի կարո-  
ղանայ խաղաղութիւն ձեռք բերել, մինչև որ չհաշտւի այդ իրո-  
ղութեան հետ: Արևի լոյսի պէս պարզ է, որ այն հզօր պետու-  
թիւնները, որոնք շախշախեցին Գերմանիան, պիտի ի վիճակի



վիննն վերջ ի վերջոյ իրենց կամքը թելադրելու նաև ծայրից ծայր քայքայլած Ռուսաստանին ու Տաճկաստանին:

Աշխարհի խաղաղութիւնն է այդ պահանջում, յաղթող մեծ պետութեանց շահն է այդ պահանջում, և այդպէս էլ կլինի վաղ թէ ուշ:

Մահացու հարւած ստացած գաղանների յուսահատական հիգերն ու ջղաձգութիւնները չպիտի մոլորեցնեն մեզ:

Իբրև քաղաքական սխտեմ, ժամանակակից Ռուսաստանն անկարող է նոյնպէս վճռական ազդեցութիւն ունենալ մեր ժողովրդի ազգային ինքնորոշման վրա:

«Սօվետական», «խորհրդային» կոչւած սխտեմը ոչ այլ է, ի թէ ոչ ուս ձեափոխւած բռնապետութիւնը: Այդ սխտեմը ունի նոյն բռնապետական տենդենցներն ու մեթօքները, ինչ որ մենք ճաշակեցինք ցարերի բռնապետական սխտեմի մէջ:

Մեր ժողովրդի ազգային անկախութեան շէնքը չի կարող տևականօրէն դրւել մի օտար սխտեմի հիմքերի վրա, որ իր հայրենիքում աճած, այսօրերից իր կատարեալ սնանկութիւնը:

Ամբողջ քաղաքակիրթ աշխարհը դէմ է այդ սխտեմին և չի կամենում, չի կարող հաշտել մի բռնազբօսիկ սխտեմի հետ որ լենինն ու իր համախոհներն ամեն գնով ձգտում են փաթաթել բոլոր ազգերի վրին:

«Սօվետական» սխտեմը ուս բռնապետական ռէժիմի մէջ սնւած քաղաքական մտքի ծնունդ է: Նա իւրահատուկ արդատիքն է ցարական բռնապետութեան:

Այդ սխտեմի գրեթէ երեքամեայ գոյութիւնը Ռուսաստանում չաղացուցեց իր կենսունակութիւնը, իր քաղաքական նպատակայարմարութիւնը:

Ընդհակառակը, նա պատճառ դարձաւ կառաղի քաղաքացիական պատերազմների, որոնք շարունակուում են մինչև այսօր էլ և յայտնի չէ, թէ երբ պիտի վերջանան:

Մի խօսքով, «սօվետական» սխտեմը չուեց իր երկրին այն, ինչի պահանջը ամենից աւելի ազադակող կերպով զգում է ուս ժողովուրդը, այսինքն՝ խաղաղութիւն:

«Սօվետական» սխտեմի պահպանութիւնը պահանջում է երկրի ոյժերի գերազոյն լարում ոչ թէ ժամանակաւորապէս, այլ

տեականօրէն, անդադարօրէն. որովհետեւ նա յենում է միայն  
զէնքի վրա, որովհետեւ նա փոքրամասնութեան դիկտատուրա է:  
«Սօվետական» իշխանութիւնը, ինչպէս և ամեն մի բռնապետա-  
կան իշխանութիւն, պահանջում է ժողովրդական եռանդի ապար-  
դիւն սպառում, որովհետեւ նա միշտ բացարձակ կամ խուլ պա-  
տերազմական վիճակի մէջ է իր երկրի ազգաբնակչութեան մե-  
ծագոյն մասի հետ և այդ պատճառով նա հարկադրւած է ազգա-  
յին ոյժերի շատ խոշոր մասը գործադրել ոչ թէ պետութեան  
բարօրութեան, այլ սոսկ իր իշխանութեան պահպանման  
համար:

Այդպիսի մի քաղաքական սիստեմ, այդպիսի մի պետական  
իշխանութիւն կարող է միայն կործանարար լինել ուժասպառ  
և արիւնաքամ հայ ժողովրդի համար:

Հայ ժողովուրդը կարող է և պէտք է որդեգրէ միայն մի  
սիստեմ, որ հիմնւում է մեծամասնութեան կամքի վրա և որ,  
ուժերի նւազագոյն լարուժով, ընդունակ կլինի պահպանել երկրի  
ներքին խաղաղութիւնը:

Աշխարհիս երեսին այդպիսի մէկ սիստեմ կայ միայն, և դա  
դեմօկրատիան, ռամկավարական հանրապետութիւնն է:

Փոքրամասնութիւնը պէտք է ենթարկւի մեծամասնու-  
թեան:

Այս է հրահանգում մարդկային պատմութեան իմաստութիւ-  
նը: Այս է պահանջում և՛ մեր հայրենիքի, մեր ազգի շահը:

Այդ առողջ քաղաքական սկզբունքի վրա է կառուցւած մեր  
ռամկավար հանրապետութեան շէնքը, և մենք ոչ մի հիմք, ոչ  
մի շահ չունենք յեղաշրջելու այն և իւրացնելու «սօվետական»  
սիստեմը:

Սակայն եթէ ունւ պետականութիւնը խորապէս ազդել է  
մեր հանրային մտքի վրա, անհամեմատ աւելի խոր արմատներ  
է գցել մեր ժողովրդի, մանաւանդ նրա վերին խաւերի հոգու  
մէջ ունական կուլտուրան:

Ահա թէ ինչու ունական կուլտուրայի, ունւ կուլտուրա-  
կան արժէքների վերագնահատութիւնն այսօր, երբ հայութիւնը  
իր ազգային ազատ դարգացման հիմքերն է դնում, դառնում է  
մի ծայր աստիճան հրատապ խնդիր, հրամայական պահանջ:  
Պէտք է որ այդ կողմից ևս մենք ճշտենք մեր դիրքերը, պար-  
զենք մեր վերաբերմունքը, ձևակերպենք մեր ազգային շահերին:

և ոգուն համապատասխան տեսակէաներ:

Միայն այդպիսի աշխատանքի միջոցով է որ մենք ի վիճակի պիտի լինենք ազատելու ոչ միայն ուրա տնտեսականութեան ծանր լուծից, այլև ուրաական կուլտուրայի սարկութիւնից:

Բայց թնչ է ուրաական կուլտուրան և ուրաական ոգին, որ աղբիւրն է այդ կուլտուրայի:

Ռուսական ոգին երկու ներհակ ծայրեր ունի:

Մէկը—մոլեգին մղումն է դէպի կողիտ, բնի ուժը և նրա պաշտամունքը: Այդ մղումը բնազդական, ես պիտի ասեմ, օրգանական և բնական արատայաութիւնն է ուրա ժողովրդի երակների մէջ առատօրէն հոսող մանդոլական արեան:

Միւսը—երագուն է, մեղի, ատրամամ, խորհրդապաշտ (միութիկ), անգործնական, կամազուրկ: Դա ծնունդ է ուրա սլաւոնական արեան:

Մանդոլական ատրը միշտ տկաիւ է ուրա ժողովրդի ոգում մէջ, մինչդեռ սլաւոնականը գրեթէ միշտ պասսիւ, կրաւորական: Այդ պատճառով յաղթողն էր դրեթէ միշտ մոնգսլական ատրըն է:

Ցարական սեծիմը մանդոլական ոգու, մանդոլական ատրբի արապետութիւնն էր Ռուսաստանում:

Ռուսական ընդդիմադիր, ազատական հոսանքները սլաւոնական ատրըն էին ներկայացնում:

Այդ հոսանքները թոյլ էին և անգոր հանդէպ ցարական սեծիմի: Եւ նրանք երբէք չպիտի յաղթանակէին, եթէ գերմանական պատերազմից և դաւերից ուժասպառ Ռուսաստանը չըկազմալուծէր, եթէ անյուրալի պատերազմական դրութիւնից վարկարեկլած ցարական սիսամը չանդամալուծէր:

Եւ թող պարագօքս չթւի, եթէ ասեմ, որ փեարաւորեան յեզաիտիսութիւնն իրօք յաղթանակը չէր Ռուսաստանի ազատական հոսանքների—կադէտների, էս-էրների, մենչեիկների: Իշխանութիւնն ընկաւ սրանց ձեռքը ոչ թէ այն պատճառով, որ սրանք ուժեղ էին, այլ որովհետեւ թշնամին անձնատուր եղաւ առանց կուի՝ շնորհիւ իր ներքին քայքայման կամ ընդարմացման, և որովհետեւ ուրիշ կազմակերպլած կամք չկար աւկաիւն վերցնելու այդ իշխանութիւնը:

Թէ կադէտների, թէ էս-էրների և թէ մենչեիկների մէջ

իշխում էր սլաւոնական մեղի, անվճռական, անգործնական և կամազուրկ ոգին: Նրանք երբէք տէրը չէր արձան սուսական քիրտ իրականութեան. նրանք մինչև վերջը մնացին երազողներ, փրկիսոփայողներ, բայց երբէք չեղան ուշալ քաղաքականութիւն վարող պետական գործիչներ:

Այդ երեք կուսակցութեանց մէջ գրեթէ ամբողջաբար էր սուսական ամբողջ լաւագոյն ինտելիգենցիան:

Այդ երեք կուսակցութեանց շուրջը համախմբուած էր սուս ժողովրդի կրթուած մասի 90—95 տոկոսը:

Եւ, չնայելով դրան, սուս ինտելիգենցիան՝ յանձին իր երեք կուսակցութեանց՝ անհազորդ մնաց սուս ժողովրդի իրական շահերին ու պահանջներին: Այդ պատճառով նրա իշխանութիւնը եղաւ անւսանական և շատ կարճատե: Նա տեղի տւեց, հէնց որ հրապարակ եկաւ մի այլ կազմակերպուած կամք, որ իր հոգեբանութեամբ, իր հակուսմերով շատ աւելի մօտ էր սուս ժողովրդին, շատ աւելի հարնապատ ըմբռնում ունէր սուսական շահերի և պահանջներին:

Այդ նոր կազմակերպուած կամքը հանդէս եկաւ բոլշևիզմ անւան տակ, խօսեց սլաւոնական ոճով, բայց գործեց մոնղոլական եղանակով:

Եւ յաղթեց:

Բոլշևիզմը մի իւրաքանչեւ համադրութիւն էր սուս ժողովրդի ոգու մէջ իշխող երկու հակաժարտ, ներհակ ծայրերի—սլաւոնականի և մոնղոլականի: Ճարտական բռնապետութիւնը շատ էր բացայայտ, իրապաշտ, մարմնաւոր: Ռուս ժողովրդի խորհրդապաշտ, տոաքելասէր, իդէալաժալ ոգուն այդ ուժիմը չէր գոհացնում: Մինչդեռ Կերենսկու քաղաքական սխտեմը շատ էր ինտելիգենտ, մեղմ և քնդհանրապէս խորթ սուս ժողովրդին իր արևմտեան ձևերով և շատ էր անիրական, կրաւորական՝ իր սլաւոնական էութեամբ: Նա անգոր էր զսպելու սուս ժողովրդի մոնղոլական տարերքը:

Եւ անտ եկաւ բոլշևիզմը և միացրեց մոնղոլական բռնապետութիւնը սլաւոնական տարաժամ երազների և իդէալների հետ, ստեղծեց մի ինքնայատուկ քաղաքական սխտեմ, որի հիմքերը բռնապետական են անպայմանօրէն և ուրի վերնաշէնքը յարմարեցւած է սուս ժողովրդի միսթիկ ու տոաքելական մզումներին:

Բօլշևիզմը չափազանց բնորոշ արտայայտութիւնն է հակա-  
 սութիւններով և ծայրայեղութիւններով լի սուսական սգու:  
 Բօլշևիզմի մէջ դուք կգտնէք և՛ սուսական մոլեգին աղանդա-  
 ւորականութիւն, և՛ անզուտ մղում դէպի ծայրայեղ գրու-  
 թիւններ, և՛ արաւոց դադափարներ, և՛ խելացնոր որոնում  
 իդէալական աշխարհի ու արժէքների, և՛ աշխարհակալական  
 մեասիանիզմ (սուսքելականութիւն), և՛ անօրինակ երկուութիւն  
 խօսքի ու գործի, և՛ հոյակապ սլացումներ մաքի ու երևակա-  
 յութեան, և՛ սանձարձակ բռնութեան, դաժանութեան ու վան-  
 դիլիզմի հակում: Բօլշևիզմի մէջ չկայ միայն սուսական սգու  
 սլաւօնական տարրերին յատուկ կանացի պասսիվիզմը (կրաւո-  
 րականութիւնը), մեղկութիւնը, երազունութիւնը. այլ ընդակա-  
 ոակը, կայ մոնղոլական աղբիւրից բղխած առնական հզօր շեշտ,  
 վճռականութիւն, կարուկութիւն, որ միշտ վայրագ ու դաժան է,  
 որովհետեւ մոնղոլական ծագում ունի:

Բօլշևիզմի մէջ դուք կգտնէք սուս սլաւօնական տարրին  
 այնքան յատուկ ապշեցուցիչ թուլութիւնը և նոյնիսկ բացակա-  
 յութիւնը իրականութեան դէացումի, որ արտայայտում է նրա  
 սօցիալական բարձր իդէալների մոլեռանդ հետապնդման մէջ,  
 սուսական այնքան յետամնաց պայմաններում:

Իրականութեան դգացումի այդ թուլութիւնը կամ բացա-  
 կայութիւնը սուս սգու մէջ կապւած է վառ երևակայութեան  
 հետ: Ռուս մարդը կեղտոտ խրճիթի մէջ ապրելով, ընդունակ է  
 երևակայել ու անկեղծօրէն հաւատալ, թէ ապրում է մաքուր  
 պալատի մէջ, որովհետև նա ընդունակ է ապրել գեղեցիկ երազ-  
 ների աշխարհում և միաժամանակ լինել անտարբեր դէպի իր մղձա-  
 ւանջային շրջապատը, դէպի իր դաժան ու այլանդակ իրականու-  
 թիւնը:

III.

**ՌՈՒՍԱԿԱՆ ՈԳՈՒ ԵՐԿՒՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԳԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ**

Սակայն սուս ցեղի մոնղոլա-սլաւօնական յատկութիւնները  
 չեն միայն, որ ձևաւորել են սուսական ոգին, սուսական կուլ-  
 տուրան: Դարերի ընթացքում սուս բռնակալական ուժիմը, որ  
 անշուշտ համապատասխան է եղել սուս պետութեան և սուս ազ-  
 գի աշխարհակալական ձգտումներին, իր հերթին ճնշել, աղճատել,  
 այլանդակել է սուս ժողովրդի, մանաւանդ սուս խնտելի գեղեցիա-

յի հագեկան աշխարհը, մեծապէս նպաստել է նրա հիւանդոտ  
կողմերի զարգացման, հրէշաւոր չափերով ոյժ է աւել տայն ծայ-  
րայեղ, ներհակ հակումներին, որոնցով ի բնէ այնքան հարուստ  
է սուսական ոգին:

Ո՞ր ժողովրդի մէջ գուք կգտնէք այնպիսի արատոց մատ-  
ւոր հոտանքներ, ինչպէս գուք տեսնում էք սուս ժողովրդի մէջ:  
Նիհիլիզմ, մաքսիմալիզմ, բոլշևիզմ—այս բոլորն էլ սուս վատա-  
սողջ ոգու հիւանդոտ արգասիքներն են:

Այս հոտանքները հիմնւած են իրականութեան տեսլայման,  
անվերապահ ժխտման վրա:

Մերժել, ամեն գնով ոչնչացնել այն բոլորը, ինչ որ կայ, և  
ստեղծել նորը, որը ոչ մի բանով նման չլինի հինին: Քանզի  
հինը միանգամից ոչ թէ լաւը, այլ լաւագոյնը շինելու համար:  
Լաւ է ոչինչ չունենալ, քան ունենալ այն, ինչ որ կայ: Կամ ոչ  
չինչ, կամ բոլորը: Յեղաշրջել միշտ, բայց ոչ բարեփոխել: Աստի-  
ճանական նւաճում, չափաւոր պահանջ, իրական կարելիութիւն,  
բնականն զարգացում— բուրժուական նախապաշարմունքներ են  
միայն: Եւ այս բոլորի հետ բանի ոյժի, բանութեան մոլեգին  
պաշտամունք:

Ո՞ր երկրի մէջ կգտնէք այնպիսի ատրածւած զաղափարա-  
կան տեւորիզմ, որ գոյութիւն ունի Ռուսաստանում: Բայց և մի  
երկրի մէջ գուք կգտնէք այնպիսի սօլստոյականութիւն, ինչպէս  
Ռուսաստանում:

Չարիքը պէտք է միայն գէնքով, ոյժով, արիւնով վերա-  
ցնել: Չարիքին չպէտք է երբէք դիմադրել: Այս երկու ծայրայեղ,  
միանգամայն իրար թխտող զաղափարներն ու արամադրութիւն-  
ները միաժամանակ ծնունդ են սուսական ոգու: Երկուսն էլ ար-  
տայայտում են սուսական ոգու երկու ներհակ ծայրերը:

Ռուսական ոգու մէջ կայ նաև մի մոլեգին օրգանական մը-  
զում ժխտելու, մերժելու Աստուծոյ Եւրոպայի կուլտուրան և  
ես պիտի տեսն նայնիակ, աւհասարակ ամեն մի կուլտուրա: Եւ  
չարունակ մենք տեսնում ենք, որ մէկը միւսի յետևից առաջ են  
գալիս նորոնոր հասարակական հոտանքներ, որոնք բացասական,  
թշնամական դիրք են բռնում հանդէպ եւրոպական քաղաքա-  
կրթութեան: Այսպէս էր, օրինակ, սլաւոնասիրութիւնը (славя-  
нофильство), որ չէր կամենում ընդունել եւրոպական կուլտուրա-  
յի ներմուծման հետ սուսական կեանքի մէջ և որ տարւում էր Ա-

քանակաբար ու լոյսը սպասում Արևելքից: Այսպէս էր նոյնպէս և նարոզնիկութիւնը, որ կասաղի պայքար էր մզում եւրոպական կազիտալիզմի ներմուծման դէմ Ռուսաստանի մէջ և որ ամեն գնով ձգտում էր տանել ուրա պետութիւնը ոչ Արևմտեան Եւրոպայի, այլ ինչ որ նոր ճանապարհով: Այսպէս էր աստուծոյականութիւնը, որ ժխտում էր ամեն տեսակի քաղաքակրթութիւն և, մանաւանդ, Արևմտեան Եւրոպայինը, համարելով այն՝ չարիք: Այսպէս է վերջապէս բոլշեփիկութիւնը, որ կուլտուրական նրկիրներին դաս տալու մեծամիտ յուսկնութեամբ պատերազմ է յայտարարել ամբողջ քաղաքակրթ մարդկութեան և որ թունալից ատելութեամբ ժխտում է եւրոպական կուլտուրան, անւանելով այն բուրժուական կամ իմպերիալիստական:

Իրանցէք ոուս հանրային մտքի դարգացումը վերջին մէկ հարիւրամեակի ընթացքում, և դուք կտեսնէք, որ ճիշտ այդ հոսանքներն են եղել, որ գտել են ամենամեծ ժողովրդականութիւնը, ամենալայն արձագանքը թէ ոուս ինտելիգենցիայի և թէ ոուս հասարակական գտնուածիների մէջ: Եւ, ընդհակառակը, շատ աւելի սահմանափակ ծաւալում են ունեցել և անհամեմատելի թոյլ, սառն ընդունելութիւն են գտել հասարակական այն հոսանքները, որոնք ճանաչել են եւրոպական կուլտուրան, ձրգտել են իւրացնել նրա արժէքները և մղել Ռուսաստանը եւրոպական ազգերի ճանապարհներով:

Այսպէս, օրինակ, մեծ յաջողութիւն չունեցան ոչ արևմտասիրութիւնը (западничество), ոչ ազատականութիւնը (լիբերալիզմը), և ոչ էլ դիտական սօցիալիզմը (մարքսիզմը), եթէ չըհաշուենք բոլշեփիզմը, որ մարքսիզմի տնունն է կրում միայն և իր էութեամբ բացարձակապէս մարքսիզմը ժխտող մի հոսանք է: Արևմտասիրութեան, լիբերալիզմի և դիտական սօցիալիզմի իսկական հետևողներն եղել են մեծ մասամբ ինտելիգենտ մարդիկ, իսկ ժողովրդական լայն խաւերի ոչ սիրտը և ոչ էլ միաքը նըրանք չեն կարողացել յուզել, ցնցել, գրաւել:

Թշնամանքը դէպի կուլտուրական աշխարհն ու արժէքները, ատելութիւնը դէպի քաղաքակրթ մարդկութիւնը չափազանց ուժեղ է ոուս ժողովրդի մէջ և անկասկած ունի մոնոլոլական ծագում, և այդ պատճառով նա այնքան հեշտութեամբ և ոգևորութեամբ իւրացնում է արևմտեան կուլտուրային հակառակ գաղափարներն ու նշանաբանները: Այդ գաղափարներն ու նշա-

Նաբանները խօսում են ուրև ժողովրդի սրախ, հոգու խորքից:

Այս տեսակէտով ուրև ժողովուրդը կարող է համեմատուել միայն իբ արիւնակից թուրք—թաթարական ցեղի հետ:

Եւ իզուր չէ, որ ասում են՝ քերիբ ուրևի կեղևը, և դուրս կգայ թաթարը:

Եւ, իբաւ, Արևմուտքը, Եւրոպան, ուստական ոգու կեղևն է միայն կազմում, իսկ նրա էութիւնը արեւելեան է, ասիական, մոնղոլական:

Արևմուտքը ու Արեւելքը, Եւրոպան ու Ասիան, սլաւօնն ու մոնղոլը ուստական ոգու մէջ դարերի ընթացքում չեն կարողացել հաշտել, ձուլել և մի ներդաշնակ ու օրգանական միութիւն կազմել: Նրանք միշտ մնացել են անհաշտ, հակամարտ և մի ջլտախչ, տանջալից երկուութիւն են առաջ բերել, մի մեծ, անանցելի վիճ են բացել ուրև մարդու հոգու մէջ:

Այդ պատճառով ուստական ոգին եղել է յարափոփոխ, յախուռն, երերուն, տարտամ:

Այդ պատճառով, վերջապէս, նրա ոյժն արտայայտուել է գրեթէ միշտ այն ժամանակ, երբ նա տարակուսել է, որոնել է, ատրրալուծել է, բացասել է, քանդել է. բայց դրական արժէքներ նա չի կարողացել ստեղծել, շինարար աշխատանքի մէջ նա եղել է միշտ թոյլ. որովհետև դրա համար պէտք է հոգու ներդաշնակութիւն, միատարրութիւն, միակամութիւն և առողջութիւն, որից գրեթէ դուրկ է եղել ուրև ինտելիգենտը, ուրև ըստեղծագործող անհատը:

Ռուսական ոգու լաւագոյն մարմնաւորումը ուրև ինտելիգենցիան է: Ռուսական ոգու լաւագոյն արտայայտիչը, հայիլին, ուրև գրականութիւնն է:

Թէ ուրև ինտելիգենցիան և թէ մանաւանդ ուրև գրականութիւնը շատ յաճախ ամբողջ քաղակալիքի մարդկութեան լարւած ուշագրութեան առարկայ են եղած: Մի նոր, ապշեցուցիչ աշխարհ են բացել նրանք Եւրոպայի առաջ: Եւ Եւրոպան երբեմն զարմանքով, երբեմն հիացմունքով, իսկ երբեմն նաև սարսուռով ու գարշանքով դիտել, ուսումնասիրել է այդ տարօրինակ աշխարհի արտաոոց տիպերը, դէպքերը, երևոյթները. որոնք իրենց բովանդակ էութեամբ ու կերպարանքով անքան խորթ, անքան օտար են եղել կուլտուրական Արևմուտքին:

Տպաւորութիւնը ուրևական աշխարհից մտայլ է և ճնշող:



Հիւանդ է այդ աշխարհը խորապէս, այլանդակ է իր ար-  
տայայտութիւնները, իր մղումները մէջ: Սարսափ է ներշնչում  
նա ամեն մի առողջ, նօրմալ մարդու:

Շինարար տիպեր, դրական երևոյթներ չկան այդ աշխար-  
հում:

Ամեն ինչ խորխորում է երկու ծայրայեղութիւնների մէջ:

Կամ մեղկ ու թուլամտք կամ անհերքութիւն դաժան և  
մռայլ իրականութեան, սարկահողի նախանշ բռնութեան առջև—  
կամ անհաշիւ ու խեղճ ըմբոստութիւն, անվերապահ ու ամբող-  
ջական մերժումն տիրող իրականութեան:

Կամ անվերջ վարանում, ամուլ ասարակուսանք, կամազուրկ  
քննադատութիւն—կամ հիւսթերիկ վհապանութիւն, մոլեգին  
ազանդամոլութիւն, վայրագ քանդումն բոլոր արժէքների, բո-  
լոր հիմքերի:


Կամ մտքի հիւանդութիւն—կամ կամքի հիւանդութիւն:

Եւ միշտ չափի պակաս, նոյնիսկ կատարեալ բացակայու-  
թիւն, թէ սիրոյ, թէ ատելութեան մէջ. միշտ մի անյաղթելի,  
անբացատրելի, ասբամերժ մղում պէպի ծայրայեղութիւններ,  
դէպի արտաոց դրութիւններ: Միշտ հրէշաւոր խախտումն ներ-  
քին հաւասարակշռութեան, միշտ ջլատիչ բացակայութիւն հողե-  
կան ոյժերի ներդաշնակութեան:

Եւ թող չափազանցութիւն չհամարւի, եթէ ասեմ, որ թէ  
ուս ինտելեկտնցիան և թէ ուս գրականութիւնը լաւա-  
զոյն նիւթն են ներկայացնում մարդկային հասարակութեան հի-  
ւանդաբանական (պաթոլոգիական) երևոյթներն ու պրօբլեմներն  
ուսումնասիրելու համար: Ռուսական լաւագոյն գրողները՝ Չեխօ-  
վը, Գօրկին, Անդրէէկը և նոյնիսկ Տուրգենևը ( որ ամենից ա-  
ւելի առողջն ու եւրոպականն է ուս գրողների մէջ և որ ունի  
մի քանի գեղեցիկ դրական տիպեր՝ այն էլ կանանց տիպեր)  
աւել են գրեթէ միայն աննօրմալ, հիւանդու, բացասական տի-  
պեր: Իսկ եթէ նրանց ստեղծել են կամ, աւելի ճիշտը, փորձ են  
արել ստեղծելու նաև առողջ, հաւասարակշռում, դրական տիպեր,  
դրանց էլ դուրս են եկել բռնադատիկ, արհեստական, անկենդան:

Ռուս իրականութիւնը, ինչպէս նաև ուս ինտելիգենտի ոգին,  
որ և ուս գրողի ոգին է, չէր ներկայացնում և չէր էլ կարող  
ներկայացնել բաւականաչափ նպաստաւոր նիւթ այդպիսի  
ծաղործութեան համար:

8787  
546-2009



Այդ պատճառով ուսուսական գրականութիւնը, ունենալով հան-  
դերձ գեղարեւոտական շատ խոշոր արժէք, գրեթէ զուրկ է կըր-  
թիչ, դաստիարակիչ նշանակութիւնից: Նա մեծապէս շահեկան է  
գիտնականների և գեղարեւոտագէտների համար, բայց նրա բարո-  
յական ազդեցութիւնը հասարակական լայն խաւերի վրա աւելի  
շուտ բացասական է, քան դրական:

Առանձնապէս բացասական է նրա ազդեցութիւնը մատաղ սե-  
րունգի և տակաւին չկտրմակերպւած նկարագիրների (քարաք-  
տերների) վրա:

Նա առաջ է բերում և զարգացնում մի վատառողջ սէք դէպի  
կեանքի հիւանդոտ կողմերը, այլանդակ արտայայտութիւնները  
աղճատւած, հաշմանդամ տիպերը, դէպի տգեղներն ու թոյլերը,  
դէպի ճնշածներն ու զրկւածները, դէպի կեղտն ու հրէշաւորը,  
դէպի մութ անկիւններն ու մահաւան դատապարտւած երևոյթները:

Նա սնուցանում է ուժանտիկ տրամադրութիւններ, տարտամ  
յոյզեր, երազային իդէեր, որոնք բթացնում են իրականութեան  
զդացումը, մշուշով պատում անհատի առողջ միտքը, կտրում  
այն՝ շրջապատող աշխարհից և մղում դէպի անիրագործելին, ան-  
կարելին, հեռաւորը:

Հասարակական առողջ զարգացման համար ուսական գրա-  
կանութիւնը ոչինչ չի տալիս:

Նա չի տալիս կենդանի տիպեր, որոնք իրենց նախաձեռ-  
նութեան ստեղծագործ ոգով, իրենց անյողդողդ կամքի ու երկա-  
թէ նկարագրի զօրութեամբ կարող են օրինակ դառնալ այդպիսի  
զարգացման համար:

Նա չի տալիս պատմութիւններ, որոնց վրա մատաղ սերուն-  
դը սովորի մտքի, զգացումի, կամքի, կարգապահութեան (դիս-  
ցիպլինայի). պատմութիւններ, որոնց վրա նա սովորի դատել  
կարելին անկարելիից, իրականը՝ անիրականից, առողջը՝ հիւան-  
դագինից, օգտակարը՝ անօգուտից, պէտքականը՝ անպէտքից:

Ոչինչ՝ հաստ ստուռ, կայուն, անվիճելի. ամեն ինչ՝ երերուն  
յարափոփոխ, վիճելի: Անվերջ որոնումներ, անզաղար դեգերում-  
ներ, անորոշ ձգտումներ, մշուշապատ երազանքներ, անեզր ցան-  
կութիւններ, յեղյեղուկ տրամադրութիւններ...

Ահա ուս գրականութեան աշխարհը:

Բնական է, որ այդպիսի գրականութեան ազդեցութիւնը

մատաղ սերունդների վրա չի կարող լինել բարերար, դրական: Եւ որքան աւելի տաղանդաւոր, հանճարեղ է այդ դրականութիւնը գեղարւեստական տեսակէտով, այնքան աւելի վնասակար է նրա թողած ազդեցութիւնը. որովհետեւ որքան աւելի գեղարւեստական է սրեւէ արժէք, այնքան աւելի խորը հետքեր է նա թողնում անհատի հոգու մէջ, այնքան աւելի նա վարակիչ, հաղորդական է:

Ոչ միայն ուսու դրականութիւնը, այլև ուսու հասարակական միտքն ընթացել է նոյն հիւանդոտ ճանապարհներով:

Յեղափոխականութիւնը նա դարձրել է ինքնանպատակ: Կրօնիւր պետական որոշ ուժիմի, այսինքն՝ կրօնը կառավարութեան դէմ նա դարձրել է իրօք կրօն պետութեան, պետականութեան դէմ առհասարակ:

Նա բթացրել է, մեղցրել է ուսու ժողովրդի մէջ օրինապահութեան, կարգապահութեան առողջ զգացումը:

Նա սերժանել է առեւտրութիւն, անարգանք դէպի իշխանութիւնն առհասարակ:

Նա սնուցել է արհամարհական, ժխտողական վերաբերմունք դէպի քաղաքակիրթ հասարակութեան տարրական հիմունքները:

Նա կասկածի տակ է դրել մարդկային բոլոր առաքինութիւնները, բոլոր սրբութիւնները:

Մոլեգնօրէն քարոզելով աշխարհաքաղաքացիական (կոսմոպոլիտական) իդէալներ ու տեսութիւններ (թէօրիաներ), նա իրօք ամենակատաղի պայքար է մղել ազգութեանց իրաւունքների դէմ:

Լինելով տիրող ազգութեան արտայայտիչ, նա բարձր գազափարներով ու մոլորեցուցիչ կեղծիքներով է մշուշապատել իր ասեւտրութիւնն ու անարգանքը դէպի հպատակ ազգերն ու ցեղերը:

Վերցրէք ամենազատամիտ և բարեացակամ ուսու ինտելեգենտին, քննեցէք նրան մի բիչ: Զբօրեցէք նրա հոգեկան էութիւնը, և դուք անպատճառ կզանէք այնտեղ անտիտեմիտիզմ (հրէատեսացութիւն) և առհասարակ թշնամանք ու տհաճութիւն դէպի բոլոր ալլաղզիները:

Սա մի մոնղոլական յատկութիւն է, որ այնքան բնորոշում է նաև թուրքին, թաթարին:

Շահ էք պատահել դուք ձեր կեանքում սուսնների, որոնք  
յարդեն ձեր լեզուն, անկեղծօրէն ձգան թօսել ձեր լեզուն, որոնք  
յարդեն ձեր ազգային անհատականութիւնը...

Բնորոշ չէ արդեօք սուսական մտածողութեան, սուսա-  
կան հոգեբանութեան համար, որ ազգասէր, նացիօնալիստ կամ  
հայրենասէր, պատրիոտ բռները ստացել են դրեթէ հայնայական  
իմաստ, ինչպէս ձեր օրերում բուրժուա, կամ «բուրժուա»  
խօսքը:

Լինել ոչ ազգասէր և ոչ հայրենասէր՝ դա սուս ինտելի գին  
տի առաջին պահանջն է: Ով այդպէս չէ, նա յետագէմ մարդ է,  
նա ծաղրի և արհամարհանքի է արժանի:

Եւ մի այնպիսի առողջ պատկերով, ստեղծագործող բնույթ,  
ինչպէսին է ազգասիրութիւնը, հայրենասիրութիւնը, որ ամենա-  
անհրաժեշտ հիմքը պիտի կազմէ ամեն մի ժողովրդի բնականոն  
կրթութեան և գաղափարակութեան, ենթարկուած էր բարոյական  
ու մտաւոր հալածանքի: Եւ այդպիսով անհատաւոր, այլանդակ-  
ւոր էր սուս մտաւոր սերունդների հոգին, այլասերուած էր  
սուս ինտելիգենցիան, այլասերուած էր ամբողջ սուսական կեան-  
քըն ու կուլտուրան:

Նոյնը կարելի է ասել և կրօնի մասին:

Իսկ կարող էք մատնանշել մի այլ երկիր, ուր կրօնն  
այնքան արհամարհուած լինէր կրթուած դասի մէջ, սրբան Ռու-  
սաստանում:

Ռուս հասարակական միաքը, կուսիւղ ուղափառ եկեղեցու  
գէմ, կուս էր յայտարարել նաև առհասարակ կրօնի դէմ: Եթէ  
միասակար էր կամ անպէտք էր այս կամ այն եկեղեցին, նշա-  
նակում էր այդ արդեօք, որ կրօննևս միասակար, անպէտք է:  
Սակայն սուսական միաքը մերժում էր այն ամենը, որ կասկած  
է եկեղեցու հետ: Եւ հաւատացեալ, կրօնասէր ինտելիգենտը  
ամենատարհամարհուած, ծաղրի ենթակայ մարդն էր ազատաժիտ  
ուստի համար:

Արհամարհանք, կամ լաւագոյն դէպքում կատարեալ ան-  
տարբերութիւն գէղի հաւատի կամ կրօնի հետ կապ ունեցող  
խնդիրները: Այս էր տես այն հոգեբանական մթնոլորտը, որի  
մէջ կազմաւորուած էր սուս ինտելիգենցիայի միաքը և կրթուած  
էին մտաւոր սերունդները:

ԱՂԳԱՄԵՐԺ ՈՒՒՆ ԵՒ ԱՅԼԱՍԵՐՈՒՄԸ

Աղգութիւնն է հիմնական նախապարհը մարդկային առաջադիմութեան: Աղգութեան ինքնայառաջ ձևով է միայն, որ հասարակութեան մարդկային ստեղծագործող աշխատանքը, կերտւած են մարդկութեան գերագոյն արժէքները: Ամեն մի առողջ կուլտուրա ծագում է և ծաղկում աղգային հիմքի վրա: Աղգութիւնը հզօրացոյն աղդակը, գերագոյն ֆակտօրն է ամեն մի կուլտուրայի:

Ժխտել աղգութիւնը, չնանաչել նրա դարգացման անհրաժեշտութիւնը, վերջապէս համարել այն մի շարիք, որի հետ լաւագոյն գէղքում կարելի է միայն հաշտուիլ, դա նշանակում է միանգամայն չքմբանել աղգութեան իսկական էութիւնը և գերը մարդկային պատմութեան մէջ:

Մտկերեսօրէն մասժող մարդիկ կան, որոնք կարծում են, թէ աղգութեանց անկախ գոյութիւնն ու ազատ, ինքնուրոյն դարգացումը վատնաւոր և նոյնիսկ յաւատարմացուցիչ շափերով խորացնում է համայն մարդկութիւնը բաժանող անջրպետները և ծայր աստիճան գժւարացնում համամարդկային համերաշխութիւնըն ու համայնակենցաղը: Այդ մարդկանց կարծիքով, ով առգորւած է աղգային իգէտլներով, նա դէմ է անդայմանօրէն համամարդկային իգէտլներին:

Այդպիսի մարդիկ իբօք գործում են նոյն սխալը, ինչ որ գործում են այն սօցիալիստաները, որոնք մի անգամից կամենում են թռչել սօցիալիստական աշխարհը, որոնք չեն կամենում ըմբանել, թէ նախապարհը գէպի սօցիալիզմ անցնում է անխուսափելիօրէն կապիտալիզմի վրայով և թէ կապիտալիզմն է, որ պիտի ստեղծէ նախապայմանները սօցիալիստական հասարակարգի:

Այսպէս էլ պարզամիտ մարդիկ կարծում են, թէ մարդկային հասարակութիւնները՝ աղգային տեսակէտով իրենց սազմնային, չբիւրեղացած վիճակի մէջ մնալով է, որ պիտի ձուլւեն և կազմեն անխուսափելիօրէն համամարդկային մի միութիւն: Նըրանք չեն կարող, կամ չեն ուղում հասկանալ, որ մարդկային յարաբերութեանց մէջ աիրող անիշխանական վիճակն ու բարնկուամները կվերանան և ամբողջ մարդկութեան ներդաշնակ հա-

մայնակենցադի ու համերաշխ, ստեղծագործ աշխատակցութեան նախապայմանները կստեղծեն միայն այն ժամանակ, երբ բոլոր ազգութիւնները գուրս կգան իրենց գոյութեան սաղմնային վիճակից, կբիւրեղանան, ազատօրէն ու անկախօրէն կզարգացնեն իրենց հաւաքական սւրոյն անհատականութիւնն ու կուլտուրան:

Ազգութիւնը հիմքը, նախապայմանն է միջազգայնութեան, ինչպէս կապիտալիզմը հիմքն է ու նախապայմանը սօցիալիզմի: Ամբողջ թափով նպաստել ազգութեան զարգացման՝ նշանակում է լուսագոյն կերպով նպաստել միջազգայնութեան: Ինչպէս ամենամեծ շափով դարկ տալ կապիտալիզմի զարգացման, նշանակում է ամենաիրական կերպով նպաստել սօցիալիզմին:

Ճիշտ է, ազգութեանց զարգացումը գրեթէ միշտ կապւած է հասարակական ամբողջ զանգւածների յարաբերութեանց ծայրայեղ սրման հետ և սւղեկցւած է արիւնտհեղ կռիւններով, թշնամութիւններով ու հակամարտութիւններով, ինչպէս և կապիտալիզմի զարգացումը: Բայց չնայելով իր բոլոր բացասական երևոյթներին, շատ մասը կողմերին, թողային կախը, ինչպէս և կապիտալիստական պրօցեսը, անխուսափելի հանապարհն է մարդկային առաջագիմութեան և լուսագոյն իդէալների իրագործման: Ազգութիւնը, ինչպէս և կապիտալիզմը, իր էութեամբ ստեղծագործող, դրական ոյժ է, որքան էլ նրանց գոյութիւնն ու զարգացումը սւղեկցւի բացասական երևոյթներով և արտայայտութիւններով:

Ռուսական պետութիւնը հիմնւած էր բազմաթիւ ազգութեանց ու ցեղերի սարկացման վրա: Բանի ոյժի դօրութեամբ էր միայն, որ աիրող ոռւս ազգը կարողանում էր իր լուծի տակ պահել բոլոր այլազգի տարրերին:

Նրա կուլտուրան չէր կարող խորը թափանցել այդ տարրերի մէջ, և հազիւ ի վիճակի էր այլասերել, ապագադայնացնել նրանց վերին խաւերը: Պետութիւնը չէր կարող և չէր կամենաւած առողջ ազգային հիմքերի վրա դնել բովանդակ երկրի և ժողովուրդների զարգացումը, որովհետև այդ պիտի նշանակէր զարկ տալ կենտրոնախոյս ոյժերի աճման, այդ պիտի նշանակէր նաև առաջուց հաշուել այդ ուժերի ազատագրման անխուսափելիութեան հետ: Մի խօսքով, այդ պիտի նշանակէր գիտակցօրէն ընդառաջ գնալ այլազգի զանգւածների անջատմանը աիրող ոռւս ազգից և հրաժարւել վերջինիս պատմական նւաճումներ:

րից, առանձնաշնորհումներից, արածնութիւններից:

Եւ որովհետեւ տիրող ոռւս ազգութեան արթուն հասարակական միտքն ըմբռնում էր, որ անկարելի է այլատարր ու այլացեղ ոռւսական պետութիւնը պահել միմիայն սելիններով ու ճնշման մեքենայով, բնազդօրէն թէ դիտակցօրէն, նա մի ճանապարհ էր փնտռում, որով հնարաւոր լինէր կապել նաեւ հողեպէս Ռուսաստանի մէջ ապրող բազմաթիւ ցեղերն ու ազգերը:

Այդ հողի վրա էր, որ նա կտուցում էր, մէկը միւսի յետեից, թէորիաներ, որոնք հիմնւած էին ազգութեան գաղափարի ժխտման վրա և որոնք ձգտում էին մերձեցնել, ձուլել Ռուսաստանի այլազան տարրերը համամարդկային իդէալների միջոցով: Ահա թէ ինչու ազգայինը միշտ նեղ էր Ռուսաստանի համար, մինչ համամարդկայինը ոռւս պետութեան, աւելի ճիշտը, ոռւս տիրող ազգի շահերին անհամեմատ աւելի համապատասխանող էր:

Եթէ ցարական պետականութիւնը ամեն կերպ խուսափում էր ճանաչել իր պաշտօնական գործաւարութեան մէջ դանազան ազգութեանց գոյութիւնը իր երկրում և իր հալաւալ ժողովուրդների միջև եղած տարբերութիւնները որակում էր կրօնական, դատնական ու երբէք ազգային սկզբունքով, ոռւս ընդդիմադիր հասանքներն էլ համամարդկային, աշխարհաբարոյաբացիական գաղափարներով էին ճշնում քօղարկել իրենց բացասական, թշնամական կամ, լաւագոյն դէպքում, անտարբեր վերաբերմունքը դէպի հալաւալ ազգութեանց գոյութեան և իրաւունքների հարցը:

Չափազանց բնորոշ է, որ սօցիալիստական ուսմունքը ոչ մի երկրում չստացաւ այնպիսի ապագային, անգամ հակազգային բնոյթ, ինչպէս Ռուսաստանում:

Նոյնիսկ միջազգային գաղափարը, որ տրամաբանօրէն իսկ պահանջում է կազմակերպւած ազգութեանց միացումը և ոչ խայտարղէտ զանգւածների ձուլումը, ոռւսական վատառողջ պայմաններում ենթարկւեց աղաւաղման, այլանդակման և դարձաւ անսպասելի կերպով հակազգային գաղափար:

Եւ ոռւս ինտելիգենտին անհերքելի ճշմարտութիւն էր թւում այն արտառոց միտքը, թէ ով կանգնած է միջազգային տեսակէտի վրա, նա չի կարող ընդունել ազգային տեսակէտը:

Մինչդեռ առողջ արամարանութիւնը միշտ հակառակ եզրակացութեան պիտի բերէր՝ այն է, որ ով կանգնած չէ ազգային տեսակէտի վրա, նա չի էլ կարող իրօք պաշտպան լինել և միջազգային տեսակէտի: Որովհետեւ ով ժխտում է ազգութիւնները, նա իրական հիմք չունի և միջազգայնութեան համար, որ է ազգութեանց միութիւնը: Եւ փաստօրէն միջազգային տեսակէտը Ռուսաստանում վարձել էր տիրող ազգութեան քողարկւած տեսակէտ, որ, եթէ ձեռնառու էր ուսու ազգին, մեծապէս զնասում էր հպատակ, ոչ ուսու ազգութեանց դասին, ծայր աստիճան մթացնում էր նրանց ազգային առողջ գիտակցութիւնը և խուլ ու այլանդակ ընթացք տալիս նրանց ազգային բնազդներէ արտալայտման:

Ճիշտ է, ուսուական գրականութիւնը, ուսուական կուլտուրան, ուսու հասարակական միտքը, սովորեցնում էր սիրել ժողովուրդը, գնալ դէպի ժողովուրդ, ապրել նրա հետ և նրա համար. քայց ուսու գրականութեան, կուլտուրայի, հանրային մտքի սիրոյ առարկան ազգայնօրէն խառնիւնտղանձ, խայտաբղէտ, անձև ու պասսիւ ժողովրդական զանգւածն էր և ոչ թէ ազգայնօրէն կազմակերպւած և ազգային բարձր անհասականութեան տէր ակաիւ ժողովուրդը: Ուրիշ խօսքով ուսու հասարակական միտքը անտես էր առնում ազգութիւնը, չէր դարձնում ընդհանրապէս սէր դէպի հարազատ ազգը, դէպի մայրենի լեզուն, դէպի ազգային ուրոյն կուլտուրան, դէպի ազգային ազատագրական շարժումը:

Եւ եթէ պաշտօնական Ռուսաստանն իր արամազրութեան տակ եղած բոլոր ճնշիչ միջոցներով ձգտում էր ուսուցման, ձուլման ենթարկել ուսուական լծի տակ աստապող բոլոր ազգերը, — ուսուական կուլտուրան, ուսուական գրականութիւնը, ուսու հանրային միտքը բոլորովին տարբեր ճանապարհներով ու միջոցներով իրօք նոյն գործն էր կատարում, — ընդարմացնում էր այդ ազգերի ազգային ոգին և իր հերթին մեծապէս նպաստում նրանց ուսուցման, այլապերման:

Չափազանց յատկանշական է, որ հսկայական ուսու գրականութեան մէջ դուր հազիւ էք գտնում մէկ հատիկ միայն հերոս, որ ապրում, կուսում և զոհում է ազգային գաղափարի համար: Այդ հերոսը Տուրգենևի հոշակաւոր «Նախօրեակին» վէպի մէջ դուրս բերւած բոլգարացի Ինսարովն է, Բայց այդ հերոսն էլ պատկեր-



ըացւած է շատ ու շատ սղօտ գոյներով, հազիւ նշմարելի գծե-  
րով և ընդհանրապէս արհեստական, անկենդան մի կառուցւածք  
է: Մինչդեռ միևնոյն ժամանակ նոյն վէպի քնացած բոլոր գոր-  
ծող անձինք նկարւած են շատ վառ և կենդանի գոյներով:

Այլ կերպ չէր էլ կարող լինել, որովհետեւ ազգային գաղա-  
փարը, ազգային իդէալը խորթ էր ոռւս ինտելիգենտին. նա չէր  
կարող տարւել այդ գաղափարով և սիրել ու սիրեցնել այն:

Բնորոշ է նաև այն հանգամանքը, որ յիշեալ մի հատիկ  
զէպքում անգամ ոռւս գեղարւեստագէտը վերցրել է մի բօլգա-  
րացու, մինչդեռ իր քթի տակ, Ռուսաստանի լծի տակ, տառա-  
պող բազմաթիւ ազգերն այնքան հարուստ նիւթ կարող էին  
մատակարարել այդ նպատակի համար:

Այսպիսով, ոռւսական կուլտուրան, ինքը դրւած չլինելով  
առողջ հիմքերի վրա, սերմանում էր անտարբերութիւն կամ  
արհամարհանք զէպի ազգային իդէալները, զէպի ազգային ազա-  
տագրական պայքարը, զէպի այլազան ազգութեանց ուրոյն կուլ-  
տուրաները: Նա ոչ միայն խթան չէր, այլ և արգելք էր այդ  
ուրոյն կուլտուրաների բնականոն զարգացման համար:

Նա տանում էր զէպի այլատերում, զէպի ազազգայնա-  
ցում:

V

**ԹԵՕԿՐԱՏԻԿ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՊԱՋԳԱՅԻՆ ՄՏԱՅՆՈՒ-  
ԹԻՒՆԸ**

Իր իդէօլօգիական (գաղափարախօսական) էութեամբ ոռու-  
սական կայսրութիւնը մի թէօկրատիկ բննապետութիւն էր,  
այսինքն՝ կրօնական հիմքի վրա կառուցւած մի պետական շէնք:  
«Պրաւօսլաւ», ուղղափառ եկեղեցին էր այդ հիմքը: Ճարը ոչ  
միայն պետութեան, այլ և ուղղափառ եկեղեցու պեան էր:

Որպէս թէօկրատիկ պետութիւն, Ռուսաստանն ազազգա-  
յին, աշխարհաքաղաքացիական, աշխարհակալական պետութիւն  
էր: Ազգային պետութիւն նա չէր և չէր էլ կարող լինել: Որով-  
հետեւ ազգային պետութիւնն աւելի բարձր ախիք քաղաքական  
կազմակերպութիւն է, քան էր ցարական Ռուսաստանը: Բացի  
այդ՝ իսկապէս ազգային պետութեան գոյութիւնն անկարելի է  
տեսնց որոշ ասմկավար կարգերի, առանց որոշ քաղաքական ա-  
զատութեան:

Ճարական Ռուսաստանն անխնայօրէն հալածում էր այն

բոլոր ոռւաներին, որոնք չէին պատկանում ուղղափառ եկեղեցուն: Տասնեակ միլիոնաւոր ոռւս ասկօլնիկներին, աղանդաւորներին (սեկտանտներին) ոռւսական պետութիւնը համարում էր իրեն թշնամի տարրեր և անհաշտ կռիւ էր մղում նրանց դէմ: Մի ազգային պետութիւն այդպիսի ընթացք երբէք չէր կարող թոյլ տալ իրեն:

Ցարական իշխանութեան համար դաւանանքն էր կարևորը, արժէքաւորը. ազգութիւնը՝ անկարեւոր էր և անարժէք:

Տարօրինակ և միևնոյն ժամանակ բնորոշ չէ, որ իշխանութեան այս մտայնութիւնն անցաւ և ոռւս ընդիմադիր հոսանքներին, ոռւս ինտելիգենցիային:

Ճիշտ է, ոռւս ընդիմադիրները, յեղափոխականների, առաջադէմ ինտելիգենցիայի դաւանանքը ուղղափառ եկեղեցին չէր բայց նրանց դաւանանքը նոյնչափ ապազգային կամ հակազգային էր, որչափ և ցարական իշխանութեանը:

Ռոս ինտելիգենցիան չէր կամենում ճանաչել ազգային տարբերութիւնները, ազգութեանց ուրօյն և անկախ դարգացման անհրաժեշտութիւնը, ինչպէս և ցարական բիւրօկրատիան: Ռոս ինտելիգենցիան ի վիճակի չեղաւ ըմբռնելու, որ մարդկային պատմութեան, մանաւանդ նորագոյն պատմութեան իսկական սուբիեկտը ազգութիւնն է և ոչ թէ հասարակական որևէ այլ հաւաքականութիւն, սօցիալական այլ խմբակցութիւն:

Սլաւօնասիրական, նարօդնիկական, տօլստօյական, սօցիալիստական ոռւսմունքները, որ այնքան մոլեգին կերպով իւրացնում ու կիրառում էր կեանքի մէջ ոռւս ինտելիգենցիան, հիմնւած էին ազգութեան ժխտման վրա՝ կամ, լաւագոյն դէպքում, ապազգային բնոյթ ունէին:

Այսպէս օրինակ, սլաւօնասիրութիւնը ճանաչում էր՝ իբրև պետական ստեղծագործութեան սուբիեկտ՝ սլաւօնական ցեղը, բայց ոչ ոռւս ազգութիւնը:

Նարօդնիկութիւնն ընդունում էր՝ իբրև պետութեան հիմք՝ աշխատաւոր ժողովուրդը, բայց ոչ ազգութիւնը, որ միանգամայն տարբեր բան է, որովհետև աշխատաւոր ժողովուրդը կարող է բաղկացած լինել ազգայնօրէն խառն տարրերից:

Տօլստօյականութիւնը ձգտում էր պետական կեանքը մտել կրօնական հիմքի վրա:

Վերջապէս, ոռւսական սօցիալիզմը պետութեան, իշխանու-

Թեան սուրբիկտ էր ընդունում միմիայն դասակարգը:

Այս բոլոր վարդապետութեանց մէջն էլ կատարելապէս բացակայում է ազգութիւնը, իբրև պատմութիւն ստեղծագործող Ֆակտոր, իբրև պետութեան բնականոն զարգացման միակ առողջ և առաջադիմական հիմք:

Եւ այսպէս ոուս հասարակական միտքն անկարող եղաւ դանել և իւրացնել այն հիմնական սկզբունքը, որի վրա միայն հնարաւոր է կառուցել ժամանակակից մի կենսունակ և կուլտուրունակ պետութիւն: Ցարական ռեժիմի գործած մէկ ծայրայեղութիւնից նա ընկաւ մէկ ուրիշ ծայրայեղութեան մէջ, անձնատուր լինելով բռնազբօսիկ, ցնորական կառուցումներին և միանգամայն անտես առնելով մարդկային պատմութեան ամենախոշոր և իրական գործօնը՝ ազգութիւնը:

Ռուսական հսկայավիթխար կայսրութիւնը շինւած էր բռնի ուժով և կառավարում էր սեփնով ու մարտկով, հրով ու սրով: Արտաքին նւաճութեան և ներքին պօզրօմներ (Չարդեր) — անասայն միջոցը, որով պահպանւում էր ոուս պետական սխտեմը:

Ռուս պետականութեան լաւագոյն ասարեքը միայն գարշանք և ատելութիւն են զգացել դէպի մի այդպիսի պետութիւն: Այս զգացումը, հետզհետէ խորանալով ու այլանդակւելով, ուղղւել է տարերայնօրէն առհասարակ ամեն մի պետականութեան, ամեն մի իշխանութեան դէմ: Այս հողի վրա զարգացել, աճել են այն հակապետական, անիշխանական հակութեանքը և հակակարգապահական մղումներն ու տրամադրութիւնները, որոնցով այնքան հարուստ է ոուս ժողովրդի հոգին և որոնք այնքան բնորոշ են նրա համար:

Ոչ մի երկիր, ոչ մի ժողովուրդ չէ յայտնաբերել ազգասիրութեան, հայրենասիրութեան պակասի կամ բացակայութեան այնպիսի հրէշաւոր օրինակներ, ինչպէս այդ մենք անասանք ճապօնական և վերջին համաշխարհային պատերազմների ժամանակ և՛ ոուս ինտելիգենցիայի, և՛ ոուս հասարակութեան ամենալայն խաւերի մէջ:

Հակառակ իր բոլոր մերձեցման փորձերին՝ ոուս ինտելիգենցիան մնացել է իրօք օտար, խորթ իր իսկ ոուս ժողովրդին:

Աղգային այն անմիջական սերտ կապը, որը, իմ կարծիքով, օրդանական բնոյթ ունի և որը սովորաբար ամեն մի առողջ ազգային մարմնի մէջ անքակտելի կերպով միացնում է

ինտելիգենցիան հարազատ ժողովրդի հետ մի ընդհանուր զգացումով, դիտակցութեամբ կամ մղումով, սուս ազգի մէջ գրեթէ գոյութիւն չունի կամ ազդեցնելու չափ թոյլ է:

Ռուս ինտելիգենցիան տեսել է միշտ մի մեծ վիճիւր և իր ժողովրդի միջև և յաճախ անձնւէր, յամառ վտարձեր է արել վերացնելու այդ վիճը: Սակայն այդ փորձերը ցանկալի հետևանք չեն աւել, ինչպէս այդ պարզւեց այնքան ազատական կերպով վերջին յեղափոխութեան ժամանակ:

Չունենալով հոգեկան կապ իր ժողովրդի հետ, սուս ինտելիգենցիան չէր կարող նաեւ ազգել նրա վրա արտաքին և դեկավարել նրան քաղաքականապէս:

Ինչման էր գաղտնիքն այս արտառայ երևայթի:

Ամեն մի ինտելիգենտ իր հարազատ ժողովրդի հետ ամենախոր և ամենագորեղ կերպով կարող է կապւած լինել միայն ազգային ընդհանուր զգացումների, գաղափարների, մղումների և շահերի հոգի վրա: Որքան աւելի ուժեղ է ազգային զգացումը, ազգային գիտակցութիւնը և ազգային կամքը մի ժողովրդի և նրա ծոցից գուրս եկած ինտելիգենցիայի մէջ, այնքան աւելի սերտ է և անքակտելի նաեւ հոգեկան կապը ժողովրդի և նրա ինտելիգենցիայի միջև:

Ոչինչ այնքան թոյլ և հիւանդոտ չէ սուս ինտելիգենցիայի և սուս ժողովրդի մէջ, որքան նրա ազգային զգացումը, դիտակցութիւնը և կամքը: Միւս կողմից՝ ծայրայեղօրէն պարզացած և շեշտւած են նրա մէջ սօցիալական, գասակարգային մղումներն ու գաղափարները:

Մինչդեռ ազգային աւողջ օրգանիզմի մէջ այդ երկու տեսակի զգացումների միջև լինում է բաւորովին հակասակ փոխաբարբերութիւն. այսինքն՝ ազգային զգացումներն ու մղումները լինում են անհամեմատ աւելի զօրեղ. քան գասակարգային, սօցիալական զգացումներն ու մղումները: Որովհետև ազգայինը միացնող է, իսկ գասակարգայինը՝ բաժանող. ազգայինն ընդգրկում է ազգի ամբողջութիւնը, իսկ գասակարգայինը՝ նրա միայն մի մասը:

Եւ այն ժողովուրդների մէջ, ուր նկատւում է գասակարգային մղումների գերահում ի հաշիւ ազգային մղումների, առաջ է գալիս մի հիւանդագին վիճակ, որի հետևանքով սօցիալական հակամարտութիւնները ստանում են չափազանց սուր և

երբեմն նոյնիսկ կործանարար բնակարաններն: Այդ երևոյթը մենք տեսնում ենք ժամանակակից Ռուսաստանում, ուր դասակարգային պայքարն ընդունել է պատմութեան մէջ չտեսնւած չափեր ու սրութիւն և սպառնում է սուս ազգի ամենակենսակաւն շահերին:

Իր ազգային կամ հակազգային դադափարներով, իր հակապետական, անիշխանական մտայնութեամբ հանգերձ՝ սուս ինտելիգենցիան բնազդօրէն կտտարել է գերազանցապէս ոչ խարհակալական դործ և այդ անտակէտով մեծապէս գիւրացրել է ցարական թւրօկրատայի ձգտութիւնը իրականացումը:

Ռուս ինտելիգենցիան իր դադափարական քարոզով ու ազդեցութեամբ հզօրապէս նպաստել է հալատակ ազգերի կրթւած դասի արւանդման, բարոյալքման, ազգայնացման, օտարացման, կտտեցրել է նրա ազգային եւտնզը, թմրեցրել է նրա մէջ ազգային արժանապատւութեան զգացումը և թունաւորել է նրա ազգային գիտակցութիւնը իր ցնորական անսութիւններով ու վատասուող մտքերով և երազներով: Իր արհամարհանքով ու ծաղրով նա սխտեմատիկարար ներշնչել է հալատակ ազգութեանց կրթւող դասին մի հրէշաւոր մտայնութիւն, սրի շնորհիւ մարդիկ սկսել են ամաչել իրենց ազգային ծագումից, քաշուել իրենց մայրենի լեզուից, իրենց հարազատ միջավայրից...

VI.

ԱՆՀԱՏԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆՆ ԵՒ ԱԶԳՈՒԹԻՒՆԸ

Անհատի ազատութեան դադափարը մեծապէս զբաղեցրել է սուս հասարակական միտքը: Լաւրօվը, Միխայլօվսկին և ուրիշ անհանաւոր սուս գրողներ ու գործիչներ անսպառ եւտնզով և անսասհման խանդավառութեամբ պաշտպանել են այդ դադափարը և պայքարել նրա իրականացման համար:

Եւ դարձանալի բան, նա հակադրւում էր մարգկութեան, հասարակութեան, պետութեան, ոչխատաւոր ժողովրդին և տանասարակ դասակարգին, բայց նա չէր հակադրւում գրեթէ երբէք ազգութեան, չէր կտաւում ազգութեան հետ: Սակայն «մարգկութիւնը» և «հասարակութիւնը» տնտեսական, քաղաքական, սօցիալական և կուլտուրական անտակէտով շատ ընդհանուր և անորոշ հասկացողութիւններ են: Գիտութիւնը քաղաքական կատեգօրիա է և անմիջապէս շօշափում է անհատի և ընդհանրութեան

միջև եղած քաղաքական շահերն ու յարաբերութիւնները: Աշխատաւոր ժողովուրդը, ինչպէս և առհասարակ դասակարգը, մի սօցիալ-անտեսական կատեգորիա է և անհատին հանրութեան հետ կապում է սօցիալ անտեսական կողմից:

Պետութեան կապն անհատի հետ վերջին հաշւով հիմնւած է ստիպողական, բռնի ոյժի վրա: Եւ այնտեղ, ուր բացակայում են ուրիշ, աւելի խոր, աւելի հոգեկան կապերը կամ անտեսական շահերը, պետութիւնը միանգամայն խորթ գաղտփար է անհատի համար, և անհատը հեշտութեամբ կարող է բաժանել պետութիւնից:

Աշխատաւոր ժողովրդի կամ առհասարակ ամեն մի դասակարգի կապը անհատի հետ բղխում է անտեսական շահից և յանձախ կրում է պատահական բնոյթ:

Միմիայն ազգութեան կապն է անհատի հետ, որ ունի խորը, եթէ կարելի է այսպէս ասել, օրգանական հիմքեր: Ազգութիւնն անբաժան է անհատից և վեր է նրա կամքից:

Ազգութիւնը անհատի ամբողջ էութեան մէջն է: Անհատի զգալու, մտածելու, ցանկանալու, ստեղծագործելու ձևը կրում է ազգութեան դրոշմը: Անհատի կապն ազգութեան հետ անբալտելի է և այնքան խորն ու հրամայական, որ որոշ դէպքերում, երբ վտանգ է սպառնում ազգութեան, անհատը մի նեբքին անդիմադրելի, անյաղթելի մղումով ընդունակ է դառնում ինքնաբերաբար անգամ իր կեանքը զոհելու ազգի փրկութեան համար: Այս տեսակէտով անհատի ազգային զգացումն իր մոլեգին դօքութեամբ և մասսայական հաղորդականութեամբ կարող է համեմատել մարդկային պատմութեան մէջ միմիայն կրօնական զգացումի հետ:

Հին և միջին դարերում, իր գոյութիւնը պահպանելու և աւրապնդելու համար, պետութիւնը յենւում էր ժողովրդի կրօնական զգացումների և կրօնական համայնքների վրա: Ազգութիւնները տակաւին գտնւում էին իրենց սաղմային վիճակի մէջ, և նրանց դերը պետական, քաղաքական կեանքում գրեթէ աննշմարելի էր:

Նոր դարերի պատմութեան ընթացքում ժողովրդների հոգեբանութեան մէջ կատարւում է մի խարունկ յեղափոխութիւն. աստիճանաբար թուլանում են կրօնական զգացումները և կազմալուծման, անդամալուծման են ենթարկւում կրօնական հա-

մայնքները:

Պատմական այս մեծ երևոյթի հետ զուգընթաց նը-  
կատուում է ազգային զգացումների ուժեղացում, ազգային դի-  
տակցութեան արթնացում, ազգային ոյժերի հաւաքման մղում:  
Սւ արդէն տասնեօթներորդ դարի քսանական թւականներից  
սկսած՝ ժողովրդական լայն զանգւածների հոգու մէջ տեղի ունե-  
ցող այս հիմնական պրօցեսը զարկ է տալիս ազգային շարժում-  
ներին: Սկսում են բացայայտ կերպով կազմաւորուել, ինքնորոշ-  
ուել ազգութիւնները: Եւ այսպէս ազատագրում են մէկը ժիւսի  
յետեից Յունաստանը, Ռումանիան, Սերբիան, Իտալիան, Բօլ-  
գարիան: Սկսում է ազգայնօրէն ինքնորոշուել, ինքնամփոփուել  
Գերմանիան: Եւ Ֆրանկո-գերման պատերազմից յետոյ ազգային  
գիտակցութիւնը Ֆրանսիայի մէջ հասնում է իր զարգացման  
գագաթնակէտին: Սկսում են ազգային մեծ շարժումներ Աւստրօ-  
Հունգարիայում, Տաճկաստանում և Ռուսաստանում, որոնց լու-  
ծի տակ տնքում էին բազմթիւ այլազան ազգութիւններ: Եւ  
վերջապէս եկաւ համաշխարհային պատերազմը, որ նւիրագոր-  
ծեց ազգային ինքնորոշման ոկզբունքը, առաջադրելով որպէս իր  
գերագոյն գաղափարական նպատակ՝ բոլոր ազգերի ազատագրու-  
ման նշանաբանը:

Մարդկութեան նորագոյն պատմութիւնը բազմաթիւ փաս-  
տերով ցոյց է տալիս, որ այն բոլոր պետական կառուցւածքնե-  
րը, որոնք ոտնակոխ են անում ազգերի ազատ զարգացման հրա-  
մայական պահանջը և դրւած չեն ազգային հիմքի վրա, խախտւա  
են և դատապարտուած են կազմալուծման, քայքայման: Որովհետեւ  
անհատի կապը ժամանակակից պետութեան հետ չի կարող ան-  
պայմանօրէն վստահելի, անքակտելի լինել, եթէ նա չի յենւում  
ազգային զգացումի, ազգութեան գաղափարի վրա, ազգային հա-  
ւաքական կամքի վրա:

Անհատի ազատութիւնը, նրա բազմակողմանի և բնականոն  
զարգացումը պայմանաւորւած է հարազատ ազգի ազատութեամբ:  
Այդ պատճառով այն պայքարը, որ մղուել է պատմութեան մէջ  
յանուն անհատի ազատութեան, վերջին հաշուով նպաստել է ազ-  
գերի ազատութեան, որովհետեւ, երբ ազգութիւնը ճնշւած է ու  
հալածական վիճակի մէջ է, բնադատուած է և անհատի անձը,  
կեանքը, աշխատանքը և զարգացումը: Մի խօսքով, անհատը և  
ազգութիւնն այնքան սերտ, այնքան անբաժան կապերով կապ-

լամ են իրար հետ, որ անկարելի է մէկի աղաաագրումն ասանց միւսի աղաաագրման:

Ռուս հասարակական միաքը չէր համենում նանաչել պատմական այս պարզ, տարրական լինելու չափ պարզ, նշմարաւթիւնը: Այդ պատճառով նա ընդունում էր պայքար յանուն դասակարգի ազատութեան, բայց չէր ընդունում պայքար յանուն ազգի ազաաագրութեան: Ընդհակառակը, սուսական միաքը, համարելով ազգութիւնը չարիք, կռիւ էր մղում ազգութեան դէմ:

Յօսքն այստեղ մտածաւոր, բացառիկ երևոյթների մասին չէ, այլ ընդհանուր սուղութեան, արքող մտայնութեան մասին:

Ռուսական ինտելիգենցիայի մէջ արքող այս ազգակեր կամ լաւագոյն դէպքում, ազգագոյին մտայնութիւնը, կգօր է, ես կարող եմ ասել, երբեք նոյնիսկ ճակաաագրական ազգեցութիւն է արել հպատակ ժողովուրդների հասարակական, մաքի զբա:

Այդ ժողովուրդների արթնացող ազգային պիտակցութիւնն իր գարգացման ճանապարհը հարթելու համար, ստիպւած է եղել անազին եւանդ սղառել՝ սուսական այդ հիւանդոտ մտայնութեան դէմ մաքառելով:

Ձէնքերը եղել են այնքան անհաւասար, պայմանները եղել են այնքան աննպաստ՝ հպատակ ազգերի համար:

Մէկ կողմից՝ կանգնած էր սուս պետութիւնը, սուս ինտելիգենցիան, որ դիււած էր արքող մեծ ազգի հսկայական, անսղառելի միջոցներով, և միւս կողմից՝ ճնշւած ու հալածական փոքրիկ ազգութիւնները, որոնց հասարակական բնականնն գարգացումը կաշկանդւած էր հաղար ու մի կապանքներով ու արգելքներով և որոնց դոյութիւնն իսկ անընդունելի էր՝ որպէս մեծագոյն չարիք պետութեան համար:

Սև կռիւն այս երկու անհաւասար ոյժերի միջև, մերթ բացայայտ, մերթ խուլ ձեւով, ակել է ատրիներ, տատնեակ տարիներ և նոյնիսկ դարեր:

Սև որքան աւելի աննպաստ են եղել հպատակ ժողովուրդների անտեսական, սօցիալական և կուլտուրական պայմանները՝ որքան աւելի թոյլ են եղել նրանց ազգային ինքնապաշտպանութեան միջոցները, այնքան աւելի ուժեղ ազգեցութիւն է արել սուսական թոյնը նրանց ազգային օրդանիզմի զբա, այնքան աւելի խորը հեաքեր է նա թողել նրանց հոգու մէջ:

Բիւր հպատակ ազգերից, որոնք աղբել են սուսական լծի



տակ, հայ ժողովուրդը, եթէ չհաշուենք միայն հրէաներին, թերևս ամենից աւելի աննպաստ պայմանների մէջ է եղել ազգային ինքնապաշտպանութեան ու զարգացման տեսակէտով և բարոյից աւելի խորը կերպով կրել է ուսական կուլտուրայի այլասերող ազդեցութիւնը:

Այս խնդրի վրա արժէր որ մի քիչ աւելի հանգամանօրէն կանգ առնէինք:

VII  
Լ Ե Ջ Ո Ւ Ն

Ամեն մի ազգի կուլտուրական ստեղծագործութեան ամենամեծ գործիքն է նրա լեզուն: Եթէ լեզուն դրւած է այնպիսի անբնական պայմանների մէջ, որ նա չի կարող զարգանալ բնականոն կերպով, ապա վտանգւում է նաև ազգային կուլտուրայի նօրմայ զարգացումը:

Լեզուն մշակւում, նրբացնւում, կատարելագործում են ազգի բարձր, կրթւած դասերը: Որքան մեծ է կրթւած մարդկանց թիւը, որոնք մտածում, խօսում և ստեղծագործում են մի լեզուով, այնքան աւելի արագ է կատարւում այդ լեզուի զարգացումը:

Մեր բարձր, կրթւած դասերը կտրւած էին մայր երկրից, հարազատ ժողովրդից և, շնորհիւ մեր ազգային կեանքի իւրայատուկ պայմաններին Ռուսաստանում, հարկադրւած էին իրենց ուսումնս ու կրթութիւնը ստանալ ոչ մայրենի, այլ օտար լեզուով:

Մինչդեռ մեր գրական լեզուի զարգացումը սահմանափակւած էր շատ նեղ շրջանակով՝ այն համեմատաբար շատ փոքրութիւ մարդկանցով, որոնք դուրս էին գալիս հայկական դպրոցներից:

Ռուսերէնի տիրապետութիւնը մեր բարձր դասերի մէջ ոչ թէ մի օտար լեզուի դիտութիւն էր սոսկ, այլ բացարձակ վտարումն մայրենի լեզուի, հայերէնի: Մեր կրթւած դասերը ոչ միայն սովորում էին խօսել ռուսերէն, այլ և մտածել ռուսերէն ու միաժամանակ արհամարհել իրենց մայրենի լեզուն:

Հայկական լեզուի, հետևաբար նաև հայկական կուլտուրայի զարգացման համար սա մի մեծ, անչափելի շարիք և դժբախտութիւն էր: Եւ մեր ազգային այլասերման առաջին և ամենազլխաւոր պատճառը այդ էր:

Աղձատւում, այլանդկաւում էր հայ անհատի հոգեկան աշխարհը. բթանում, աղաւաղում, հիւժւում էին հայ անհատի ըստեղծագործական կարողութիւնները: Եւ դրա հետ միաժամանակ

աղճաաւում, անդամալուծւում էր և մեր բովանդակ կուլտուրայի զարգացումը:

Երկու տարի է, որ գոյութիւն ունի հայկական պետութիւնը: Բայց մինչև օրս էլ, անդամ մեր պետական հաստատութեանց մէջ, ուսներէնք շարունակում է պահպանել իր անբաժանելի դիրքը: Մենք մտցնում ենք այժմ ազգայնացում, մենք ձգտում ենք հաստատել հայերէնի անբաժանելիութիւնը մեր բոլոր պետական ու հասարակական հիմնարկութեանց մէջ: Սակայն կործող ենք մենք յաջողութիւն ունենալ, եթէ ուսներէնք ատկաւին շարունակում է իշխել մեր դպրոցում, մեր ընտանիքում, մեր բարձր, կրթւած դասերի մէջ:

Բաւական չէ բնաւ, որ մեքենայօրէն, ստեղծանօրէն մենք վտարենք ուսներէնք մեր հաստատութիւններէց: Պէտք է, որ միաժամանակ հետևողական, անդադր և յամու կոխ մղենք ուս լեզուի դէմ և մեր կեանքի բոլոր ասպարէզներում: Ռուս լեզուն թէ մեր հասարակական և թէ մեր մասնաւոր կեանքում դարձել է մի ծանր հիւանդութիւն, որից մենք պէտք է ազատենք՝ ինչ գնով էլ լինի:

Հարկաւ ամեն մի օտար լեզուի գիտութիւնը անհատի համար բարիք է. բայց երբ այդ գիտութիւնը կատարւում է ի վրէնս մայրենի լեզուի, նա արդէն դառնում է շարիք՝ ազգային ու, ևս պիտի ասէի նաև, անհատական տեսակէտով: Ազգայնում, երբ մեր ազգային պետութեան հիմքերը կամբաստնուեն, երբ մեր ազգային կուլտուրայի զարգացման բոլոր նշանադրները կհարթուեն և երբ, վերջապէս, մեր գրական լեզուն կդառնայ մեր բարձր, կրթւած դասերի գործածական լեզուն, ուս լեզուն կկորցնէ մեզ համար իր վտանգաւոր կողմերը և կանցնի օտար լեզուների սովորական շարքը:

Սակայն այդ ժամանակ էլ օտար լեզուների ուսումնասիրութեան գործում մենք պէտք է որոշ և խիստ ընտրութիւն անենք:

Օտար լեզուների գիտութիւնը պարտադիր պիտի լինի ամեն մի կրթւած հայի համար: Բայց նախ՝ ոչ մի օտար լեզու, որքան էլ նա բարձր ու կարևոր լինի, չի կորող բռնել և չպէտք է բռնի մայրենի լեզուի տեղը, և երկրորդ՝ օտար լեզուների մէջ անպայման գերադասութիւն պիտի տրւի համաշխարհային լեզուներին, այսինքն՝ անգլիերէնին, ֆրանսերէնին կամ գերմաներէնին:

Սրանք են, որ մեզ կնախկնանցիտայի տղև պիտի բանան

համաշխարհային գիտութեան և արևստի բոլոր դոները, բոլոր հասարակութիւնները: Սրանք են, որ մեր կրթած հասարակութիւնը հողորդակից պիտի դարձնեն կուլտուրական երկրների կեանքին և մտնակից պիտի դարձնեն եւրոպական ու ամերիկեան քաղաքակրթութեան բոլոր բարիքներին: Սրանց միջոցով է վերջապէս, որ մեր ազգը սերտորէն պիտի կապւի աշխարհիս ամենաբարձր ժողովուրդների հետ, որոնցից այնքան շատ բան ունենք սովորելու: Իսկ ուսներէնն աւելի կամ նաեւ մօտաւոր ապագայում պիտի ներկայացնէ մեզ համար ոչ աւելի մեծ հեռաքրքրութիւն, քան լեհերէնը, սպաներէնը, ռումաներէնը, ուկրայներէնը:

Ես պարզօրէն գիտակցում եմ, թէ որ աստիճանի դժւար պիտի լինի մեզ համար միտնգամայն ազատել սուս լեզւի միտնեծան տիրապետութիւնից մեր կրթած դասերի կեանքում:

Քայլ առ քայլ առւստական ամբողջ ճակատի վրա ուսս լեզուն անխնայօրէն, անվերապահօրէն, գուրս պիտի շարտւի այն բոլոր դիրքերից, որոնք ամենայն իրաւամբ պիտի պատկանեն մեր պետական և ազգային լեզւին՝ հայերէնին:

Այս հարցում չպէտք է լինի որևէ կօմպրօմիս, որևէ վարանում, որևէ տարակօրծութիւն:

Այս հարցում մենք պէտք է հանդէս բերենք անյողողդ կամք, կարգաւահութեան միշտ արթուն, միշտ զգտտս ոգի:

Ամեն մի գիտակից հայ ամենից անաջ պիտի կուի ինքն իր դէմ, իր ուսներէն խօսելու վատ սովորութեան դէմ: Ոչ միայն իր հասարակական պարտականութիւնները կատարելիս, այլ և իր մասնաւոր յարաբերութեանց մէջ ամեն մի հայ ինտելիգենտ պիտի աշխտտի խօսել հայերէն և հայերէն խօսելը սովորութիւն պիտի դարձնի:

Բոլոր այժերով մենք պէտք է ձգտենք արմատախիլ անել հասարակութեան մէջ տիրող այն ախտաւոր մտայնութիւնը, որով ուսներէն խօսելը համարւում է բարեկրթութեան նշան, քարձր տոն:

Ամեն մի հայ պիտի սովորի յարգել, սիրել իր մայրենի լեզուն, պարծենալ հայերէնի լաւ գիտութեամբ, մարգել իր միտքը հայ լիզւով: Հայ լեզուն պիտի լաւ ամենուրեք — ոչ միայն պետական հաստատութեանց մէջ և դպրոցներում, այլ և փողոցներում, հրապարակներում, ընտանիքի մէջ, մասնաւոր զրոյցների ատեն, հասարակական ժողովներում:

Եւ միայն այսպէս է, որ մենք պիտի կարողանանք իրապէս ազգայնացնել, հայացնել մեր անհատական ու հասարակական կեանքը և ազատել ուս լեզուի լուծից, ստրկութիւնից:

Եւ միայն այն ժամանակ, երբ մենք կկտրենք մեր բարձր, կրթւած գասերը ուս լեզուից, կազատենք մեր ազգը այն վատաւասող ազդեցութիւնից, որ բերում է իր հետ ուս գրականութիւնը, ուս հանրային միտքը, ուսական կուլտուրան: Որովհետև լեզուն կենդանի օրգանն է ժողովրդի ոգու: Եւ ինչպէս որ ասում են, թէ ոճը ինքը մարդն է, կարելի է պնդել նոյնպէս, որ լեզուն ինքը ժողովուրդն է, ժողովրդի ոգին:

Մեր ժողովուրդը՝ իր առջև դրած քաղաքական, տնտեսական, սօցիալական և ազգային մեծ խնդիրները յաջողութեամբ լուծելու համար՝ պիտի զարգացնի իր մէջ նախածեռնութեան ստեղծագործ ոգի, ուժեղ, տոկուն նկարագիրներ (քարակտերներ), շինարար սկզբունքներ, կենսագործ մտքեր, հաստատուն հիմունքներ հասարակական ու մասնաւոր կեանքի, առողջ տրամադրութիւններ և անվիճելի առաքինութիւններ, որոնք յատուկ են ամեն մի կենսունակ հասարակական օրգանիզմի, վերջապէս, պարզ, որոշ ու ուշալ վերաբերմունք դէպի իրերն ու երևոյթները, և իրականութեան ու չափի ուժեղ զգացում:

Այս բոլոր բարեմասնութիւններից, ինչպէս մենք տեսանք, առևական ոգին և գրականութիւնը գրեթէ զուրկ են: Եւ, ընդհակառակը, այդ բոլորը մենք կարող ենք գտնել արևմտեան մեծ ազգերի՝ գերմանացիների, ֆրանսիացիների և մանաւանդ անգլիացիների մէջ:

Մեր ժողովրդի հողեկան առողջացման և մեր ազգային կուլտուրայի բնականոն զարգացման համար մենք պէտք է թօթափենք մեր վրայից ուսական գրականութեան, կուլտուրայի ազդեցութիւնները և մեր ուսումնածառաւ հայեացքն ուղղինք միմիայն դէպի քաղաքակիրթ և առողջ Արևմուտքը և ոչ թէ դէպի ուսական Արևելքը, որ իր վատաւասող մղումներով մեզ աւելի շուտ կարող է տանել միայն դէպի այլասերում, բարոյալքում, կործանում:

### VIII

## ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊՄԻՍՈՋԸ ԵՒ ՀԱԿԱԶԳԱՅԻՆ ՏԵՆԳԵՆՑԸ

Մեր հասարակական կեանքի ոչ մի ասպարիզում թերևս

այնքան ցայտուն կերպով հրապարակ չի դալիս ուսական ազգեցութիւնը, որքան մեր քաղաքական աշխարհայեցողութեան ձևաւորման մէջ:

Ռուսական ազգեցութիւնը, — եթէ մենք վերցնենք ուսու ինտելիգենցիայի մէջ ամբողջ մտայնութիւնը միայն, — արտայայտում է երկու շատ բնորոշ կողմերով:

Առաջինը սօցիալիստական այն պոսիտիւզն է, որով ուսու կըրթւած հասարակութիւնը վարակւած է անդիմադրելի ոյժով ու ոչ մի երկրի մէջ չափանւած չափերով:

Երկրորդը ապագային կամ հակագային այն տենդենցն է, որի նմանը դժար է գտնել մի որ և է այլ ժողովուրդի և ինտելիգենցիայի մէջ:

Այս երկու երևայթներն էլ ծայր աստիճան ուշագրաւ են մեզ համար, և արժէր, որ մի քիչ աւելի հանգամանօրէն կանգ առնէինք նրանց վրա՝ նրանց իսկական նշանակութիւնն ըմբռնելու համար:

Սօցիալիզմը նորագոյն գիտական իմաստով մի գաղափար է, որը ամենասերտ կերպով կապւած է իրականութեան հետ:

Սօցիալիզմն ընդգրկում է գլխաւորաբար մարդկային տրնտեսութիւնը, նա սօցիալական յարաբերութիւնների, նիւթական երևայթների աշխարհ է:

Սօցիալիզմի նպատակն է անտեսական, նիւթական աշխարհի հիմնական բարեփոխութիւնը:

Սօցիալիզմը մի իդէալ է, այն, բայց ոչ թէ երևակայութեան և սուբիեկտիւ ցանկութեանց վրա հիմնւած մի իդէալ, այլ իրականութիւնից անմիջապէս բխող և իրականութեան վրա ամբողջովին յենւող մի իդէալ:

Սակայն սօցիալիզմը չի կարող բղխել ամեն մի իրականութիւնից. նա կարող է բղխել միայն վերջին ծայր դարգացած կապիտալիստական իրականութիւնից:

Այդ պատճառով, որքան աւելի զարգացած է կապիտալիստօրէն մի երկիր, այնքան աւելի նպատաւոր հող պէտք է լինի այնտեղ սօցիալիստական գաղափարների և ձգտումների հաստատուն ու բեղմնաւոր ծաւալման համար:

Այս տեսակէտով Ռուսաստանը ներկայացնում էր մի ազգեցուցիչ պատկեր: Այստեղ մենք տեսնում ենք մի հսկայական հակասութիւն ուսու իրականութեան ազդեցող յետամնացութեան և ուսու ինտելիգենցիայի սօցիալիստական զանգւածային պաշտամունքի միջև:

Ամեն մի հասարակական գաղափար արգիւնաւոր կարող է լինել սիւսն այն ժամանակ, երբ նա բղխում է շրջապատող իրականութիւնից, որի մէջ տնհատը կամենում է ձերբանել այդ գաղափարը: Իսկ եթէ գաղափարը դրսից բերւած մի ապրանք է և հետև է շրջապատող իրականութիւնից, այդ դէպքում այդպիսի գաղափարը կամ դատապարտում է տնհատին հասարակական անլութեան, կամ բթացնում է նրա մէջ իրականութեան կենդանի զգացումը և գարձնում նրան քաղաքական ֆանտազիօր:

Սօցիալիզմը Ռուսաստանում Արևմտեան Եւրօպայից բերւած մի ուսմունք էր, որ բնական ծնունդն էր եւրօպական կապիտալիստօրէն զարգացած երկրների մէջ առաջ եկած նոր տնտեսական և սօցիալական ազդակների: Այնտեղ ինքը կեանքն էր, որ յարճուն կապիտալիզմի նոր երևոյթներով ու խնդիրներով ապաւորւում էր մասածող մտքդեանց գլուխների մէջ և յարուցանում, ձեւաւորում սօցիալիստական գաղափարներ: Մինչդեռ Ռուսաստանում սօցիալիստական ուսմունքը, ներմուծւելով օտար երկրներից և հիւանդագլին մոլեռանդութեամբ ու յափշտակութեամբ իւրացւելով ուրև ինտելիգենցիայի կողմից, չունէր անմիջական կապ ուրևական իրականութեան հետ, և նրա տարածումը չէր բղխում ամենեին ուրև իրականութեան անմիջական պահանջներից:

Այդ պատճառով է, որ մինչ՝ արևմտեան Եւրօպայում, սօցիալիզմի մայր երկրներում, որոնք միաժամանակ և կապիտալիզմի մայր երկրներն են, սօցիալիստական շարժումն ընթանում է հասարակուն քայլերով, աճում է նօրմալ կերպով, աստիճանական նւանումներով՝ անտեսական և սօցիալական կեանքի զարգացման հետ զուգընթաց, — Ռուսաստանում ընդհակառակը, սօցիալիստական հոսանքը կատարում է աննախընթաց թօխըներ, ստանում է ոչ մի այլ երկրում չտեսնւած չափեր և իրականութեան միանգամայն տնհամապատասխան ուղղութիւն ու ձեեր: Ռուս ինտելիգենտի միաքը սեղմւած չէ իրականութեան նեղ շրջանակում, կաշկանդւած չէ իրականութեան ծանր կապանքներով, չափաւորեղ, սանձող պայմաններով: Ռուս ինտելիգենտի միաքը գործում է ժամանակից և տարածութիւնից դուրս:

Ռուսական իրականութիւնը ամբողջ դարերով յետ էր մընացել արևմտեան երկրներից: Սակայն ուրև ինտելիգենտի միաքը յաւակնութիւն ունէր եւրօպական մաքի հետ միասին և յաճախ նոյնիսկ հակում էր ցոյց տալիս նրանից էլ առաջ անցնելու:

Ռուս մարդու ոյժերից շատ վեր էր փոխել իր իրականութիւնը, բարձրացնել, հասցնել այն գէթ եւրօպականի աստիճանին: Մինչդեռ ռուս մարդու միտքը, որ ի վիճակի էր բարձրանալ եւրօպական գագաթները, չէր կարող հաշտել այս ճակատագրական իրողութեան հետ: Եւ այնտեղ, ուր անգոր էր իրականութիւնը, բնականաբար սկսում էր գործել երևակայութիւնը:

Եւ այսպէս ռուս մարդու մտքի մէջ մի տարօրինակ կապակցութեամբ խտնուում էին իրար իրականութեան ճնշող տրւեալները և երևակայութեան հոյակապ կառուցւածները:

Այս հողի վրա առաջ էին դալիս երկու արտառոց, ծայրայեղ մղումներ:

Կամ ռուս ինտելիգենտը, ներշնչւելով այնպիսի իդէալներով, որոնք իր հայրենի գաժան ու յետամնաց իրականութիւնից շատ բարձր էին ու միաժամանակ հիւանդագին կերպով գիտակցելով իր անգորութիւնը հանգէպ այդ ճնշող իրականութեան, կամենում էր զոհաբերական մաքրութիւնը և այդ պատճառով չէր իջնում դէպի կեղտոտ, ցածր իրականութիւնը, ու թու՛մ էր իր գաղափարական բարձրութեան վրա:

Կամ ռուս ինտելիգենտը, զինւելով ժամանակակից հասարակական բարձր գաղափարներով, կոյր մտլեռանդութեամբ կամենում էր՝ հակառակ առողջ բանականութեան ծանր փաստարկութիւններին, հակառակ տխուր իրականութեան տուարկայական ջախջախիչ աւեալներին, անմիջապէս, ամեն գնով, ամբողջութեամբ իրագործել այդ վե՛հ գաղափարները կեանքի մէջ և այդ պատճառով հարկադրւած էր գեհեկացնել, ազաւտել իր գաղափարները, որպէսզի հնարաւոր լինի յարժարեցնել նրանց՝ գեհեկ իրականութեան:

Առաջին դէպքում ռուս ինտելիգենտը դուրս չէր գալիս հասարակական կեանքում քննադատողի, երազողի դերից: Իսկ երկրորդ դէպքում նա դառնում էր աղանդաւոր մտլեռանդ, գործիչ, որը կորցնում էր միանգամայն իրականութեան զգացումը, չափի և կարելիութեան զգացումը և որի միտքը բարանում էր իր գաղափարների մէջ:

Կամ անվերջ քննադատութիւն, կամ կոյր դաւանապաշտութիւն—ահա այն հոգեբանական մթնոլորտը, որի մէջ զարգացաւ ռուսական ոօցիալիզմը և վերջ ի վերջոյ դարձաւ մի կրօն թէ ռուս ինտելիգենցիայի և թէ ռուս հասարակութեան լայն խտերի համար:

Աւելորդ է ասել, թէ ո՞ր աստիճան անբնական ու վտանգաւոր էր երկրի նօրմալ, առողջ դարգացման համար մի դրութիւն, երբ սօցիալիզմի նման մի դգաստ ու սէալ քաղաքական շարժում ստանում էր կրօնական բնոյթ, ձեեր ու մղումներ:

Իր այդ կրօնական բնոյթի, ձեերի ու մղումների շնորհիւ սօցիալիզմը մոլորաստանում ի վիճակի եղաւ նւաճել ոռւս կրօնամուլ ժողովրդի սիրտը և վճռական դեր կատարել ոռւս քաղաքական կեանքում:

Դժւար է երևակայել աւելի մեծ, վտանգաւոր փորձութիւն սօցիալիզմի համար, քան նրա չափազանց վաղաժամ քաղաքական յաղթանակը անտեսապէս յետամնաց մոլորաստանում,—մի բան, որ դատադարտւած է անխուսափելի վիժման և որ պէտք է անսուղղելի կերպով վարկաբեկի սօցիալիզմի դադափարը ժողովրդական գանդւածների աչքում:

Աւելի ևս վաղաժամ ու վտանգաւոր պէտք է համարել սօցիալիզմի յաղթանակը Հայաստանում, ուր բացակայում են ամենատանրաժեշտ օրինակաւ աւեակները ոչ միայն սօցիալիստական, այլ նոյնիսկ կապիտալիստական խոշոր անտեսութեան համար: Հայաստանը տակաւին նոր է մտնելու կապիտալիզմի շրջանը: Կեանքաբար սօցիալիզմի քաղաքական տիրապետութիւնը կարող է միայն դժւարացնել, կաշկանդել կապիտալիզմի բնականոն դարգացումը: Եւ որովհետեւ սօցիալիզմի իրականացման միակ ճանապարհը կապիտալիզմի ծայրահեղ դարգացումն է, կարելի է ասել, որ մեր երկրի ներկայ պայմաններում—սօցիալիստական հասարակարգ» հաստատելու ցնորամիտ փորձն ամենավտանգաւոր արդելքն է սօցիալիզմի ապագայ իրական յաղթութեան համար:

Անսարակուսելի է, որ ոռւս սօցիալիստական պսիսօղը շատ ուժեղ չափով վարակել է նաև ոռւսահայ ինտելիգենցիան և ոռւսահայ քաղաքական միտքը:

Մոլոր ազդեցութիւնը ակնյայտնի կլինի միանգամայն, եթէ համեմատութեան գնենք իրար ոռւսահայ և թուրքահայ, կամ, առհասարակ, ոչ-ոռւսահայ ինտելիգենտին: Կոյր, կիւանդագին հակում դէպի սօցիալիստական գաղափարները և անդիժադրելի, մոլեգին ձգտում, ինչ գնով էլ լինի, այդ գաղափարները իրականացնելու կեանքի մէջ. ահա մի գիծ, որից իսպառ գուրկ է թուրքահայը, բուլգարահայը, ամերիկահայը, եգիպտահայը և այլն, և որ այնքան դարմանալի կերպով յատկանշում է ոռւսա-



հայ ինտելիգենտին, ինչպէս և ուրս ինտելիգենտին:

Սե մինչև որ ուսանայ ինտելիգենցիան չթօթափէ իր վրայից ուսանական ազդեցութիւնները, նա չպիտի կարողանայ ազատել նաև ուրս սօցիալիստական պոլիտիկայից, ուրս սօցիալիստական բոժատիզմից, որն այնքան խանգարում է հայ քաղաքական մըտքի զգաստացման և յստակ, պարզորոշ ձևակերպման:

IX

**ԱԶԳԱՅԻՆ ԱՏԼԵՍԵՐՈՒՄԸ ԵՒ ԲԱԶԱԲԱԿԱՆ ՄՅՔԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ**

Անժխտելի իրողութիւն է, որ ուրս ապագային կամ հակազգային տրամադրութիւններն ու մտայնութիւնը իրենց խորը կնիքն են դրել նաև մեր քաղաքական աշխարհայեցողութեան վրա:

Ճիշտ է, մեր ժողովրդի ազգային բնազդը՝ հակառակ բոլոր աննպաստ պայմաններին՝ միշտ եղել է շատ ուժեղ և նոյնիսկ անյաղթելի: Սակայն մեր կրթած դասերը, շնորհիւ այն հանգամանքին, որ կարելի են հայութեան մայր զանգւածից, շատ հեշտութեամբ են ենթարկւել ուսական մտքի ապագայնացնող ազդեցութեան: Հայ ինտելիգենցիան մասնաւորապէս մի դարմանալի տկարութիւն էր երևան բերում հանդէպ ապագային կամ հակազգային գաղափարներին:

5748

Այս տեսակէտով առանձնապէս ուշագրաւ է վերջին երկու տասնամեակի ընթացքում մեր ինտելիգենցիայի և մեր քաղաքական մտքի զարգացումը:

Մէկ կողմից՝ մեր ինտելիգենցիայի մի շատ զգալի մասը միանգամայն օտարանում, հեռանում էր հայ քաղաքական կեանքից և անձնատուր լինում հասարակական գործունէութեան ուրս միջավայրի մէջ ու սկսում ապրել անվերապահօրէն ուսական շահերով, միւս կողմից՝ հայ ինտելիգենցիայի այն մասը, որ կտալած էր հայ ժողովրդի և իրականութեան հետ, սկսում էր հետզհետէ, միշտ աւելի ու աւելի ուժեղ կերպով, ներշնչւել ապագային, իսկ երբեմն նոյնիսկ հակազգային տրամադրութիւններով, սկսում էր տադորւել ապագային գաղափարներով ու մղումներով, աշխատելով միաժամանակ ապագայնօրէն գունաւորել այն քաղաքական կազմակերպութեանց աշխարհայեցողութիւնը, որոնք կանգնած էին ազգային տեսակէտի վրա և հետապնդում էին դերազանցապէս ազգային նպատակներ:

Ապագայնացման այս պրօցեսը, որ կատարոււմ էր այս երկու ուղղութեամբ, մեծապէս կասեցնոււմ էր մեր ժողովրդի ազգային կամքը և անշտփելի վնասներ հասցնոււմ մեր ազգային դատին:

Մեր քաղաքական մտքի զարգացման մէջ ապագային կամ հակագային ուժեղ խմորում սօցիալիստական ծայրայեղ գունաւորումով, սկսոււմ է 20-րդ դարի սկզբին (1902—1903), երբ Հ. Յ. Դաշնակցութիւնից առաջին անգամ անջատոււմ է երիտասարդների մի խմբակ, որ յետոյ մասամբ մտնում է Ռուսաստանի Սօցիալ-Դեմոկրատական կուսակցութեան մէջ, մասամբ էլ կազմում է իր առանձին հայկական Սօցիալ-Դեմոկրատական կուսակցութիւնը:

Այդ տարրը կատարի կռիւ է մղում Հ. Յ. Դաշնակցութեան ազգային դադափարների, ազգային գործելակերպի, ազգային նպատակների դէմ և գերագոյն ճիգեր է թափում ազգակեր միջազգայնութեան հողի վրա դնել դասակարգային պայքարը, որ դառնում է նրա համար մի տեսակ ինքնանպատակ:

«Ազգութիւնը մի յեռադէմ դադափար է, ազգութիւնը մի շարիք է» — անա. այն մտայնութիւնը, որով վարակւած էր այդ հոսանքը և որով նա կամենում էր վարակել նաև ամբողջ հայ հասարակութիւնը:

Գանւեցին նոյնիսկ այնպիսի աղանդամուլ հայ սօց.-դեմոկրատներ, որոնք Հ. Յ. Դաշնակցութեան առողջ տեսակէտը յայտարարեցին «պանարմենիստական», իմպերիալիստական, բուրժուական տեսակէտ: Եւ միակ առաջուկէմ քաղաքական դաւանանքը հոշակեց դասակարգային գաղափարը, որը, աղանդամալների կարծիքով, չի կարող երբէք հաշաւել ազգային տեսակէտի կամ ազգային դադափարի հետ:

Ազգութեան անվերապահ ժխտումը, դասակարգի անալայման պաշտամունքը և դասակարգի ու ազգութեան կատարեալ անհաշտութիւնը աննկատելի կերպով դարձաւ մի այնպիսի դօզմա, մի այնպիսի ակսիօմա, որի դէմ վիճելը համարոււմ էր քաղաքական ազիտութիւն, յետադիմութիւն, խաւարամտութիւն: Եւ ծայր տւաւ մեր երիտասարդ սերնդի մէջ մի ախտաւոր մըտայնութիւն, որի հետեանքով իրան յեղափոխական, ձախ համարող ամեն մի ինտելիգենտ սկսեց խուսափել անգամ «ազգ», «ազգային» բառերը գործածելուց, եթէ նոյնիսկ փաստօրէն նա կանգնած էր ազգային դատը պաշտպանելու տեսակէտի վրա: Եւ

այս երևոյթը նկատուում էր ոչ միայն Հ. Յ. Դաշնակցութիւնից անջատուած ասորբերի մէջ, այլ որոշ չափով նաև Յ. Հ. Դաշնակցութեան շարքերում:

Այս տեսակէտով կարելի է ասել, որ, եթէ Հ. Յ. Դաշնակցութիւնից անջատուած սօց.-դեմօկրատական խմբակը սակաւաթիւ էր, բայց նրա գաղափարական ազդեցութիւնը տարածուում էր անհամեմատ աւելի ընդարձակ շրջանակի վրա:

Տարիների ընթացքում սակայն հայ սօց.-դեմօկրատները մէջ ազգային հարցի նկատմամբ տեղի ունեցաւ հիմնական շրջումն, կերպարանափոխութիւն:

Նրանց աւելի առողջ, շիտակ և ազգայնօրէն չայլասերուած մասը հեռագհտէ զգաց իր սխալը և իր համար աննկատելի կերպով ենթարկւեց, եթէ կարելի է այսպէս ասել, ազգայնացման: Միշտ աւելի ու աւելի որոշակի և հաստատուն կեցով նա ընդգրկեց ազգային գաղափարի իսկական արժեքը և աշխատեց իր դասակարգային ըմբռնումները հաշտեցնել ազգային տեսակէտի հետ ու իր սօցիալիստական գաղափարները գնել ազգային կառավարի մէջ:

Հոգեբանական այս էւօլիցիայի շնորհիւ էր, որ մեր օրերում հնարաւոր դարձաւ կազմակերպումը «Հայաստանի սօցիալ-դեմօկրատական կուսակցութեան», որի ըմբռնումը ազգութեան մասին գրեթէ ոչնչով այսօր չի տարբերուում Հ. Յ. Դաշնակցութեան աւանդական տեսակէտից:

Սակայն ապազգային խմբումը, որ մօտ քսան տարի սրանից առաջ ծայր աւեց Հ. Յ. Դաշնակցութեան ծոցում ու նրանից դուրս և արտայայտեց մի խումբ սօցիալ-դեմօկրատների անջատումով Հ. Յ. Դ.—ից, շարունակեց յարաճուն կերպով մինչև 1905—1907 թթ., երբ ռուսական տռաջին յեղափոխութեան շնորհիւ ստացաւ աւելի ծաւալուն և աւելի սուր բնաւորութիւն: Այդ շարժման հետևանքը եղաւ երկրորդ անջատումը Հ. Յ. Դաշնակցութիւնից:

Այս անգամ Հ. Յ. Դաշնակցութիւնից պոկւեց իրենց սօցիալիստ-յեղափոխական անւանող երիտասարդների մի խմբակ, որ մտաւ ռուս սօցիալիստ-յեղափոխական կուսակցութեան ծոցը:

Հեռանալով Հ. Յ. Դաշնակցութիւնից, նրանք հաւատացնում էին, որ կամենում են լինել մաքուր, անարատ և հետևողական սօցիալիստներ:

Բաժանման հիմնական պատճառը սակայն այդ չէր: Ան-

Չատուածները շատ ուժեղ չափով վարակւած էին ապաղգային և հակազգային տրամադրութիւններով ու մղումներով, նրանք չէին կարող հաշուել Հ. Յ. Դաշնակցութեան ազգային նպատակների հետ:

Անջատուածները չէին ընդունում որևէ համազգային դատի գոյութիւնը: Նրանք կամենում էին բաժանել սուսահայ ժողովուրդը թուրքահայ ժողովրդից, պնդելով, որ նրանց վիճակի մէջ ոչ մի նմանութիւն չկայ, հետևաբար և նրանց քաղաքական քաղղը պիտի լինի տարբեր:

Մի խօսքով, նրանք համոզւած էին, որ ազգութիւնը իր էութեամբ հակասում է սօցիալիզմին և որ սօցիալիզմը կարող է ճանաչել միմիայն դասակարգային գոյութիւնը ու պէտք է յենւի դասակարգային պայքարի սկզբունքի վրա: Իսկ եթէ նրանց շարքերում կային մարդիկ, որոնք աւելի դրական հայեացք ունէին ազգութեան և ազգային հարցի վրա, այդպիսիների համար էլ այնուամենայնիւ դասակարգն էր գլխաւոր, որոշող գործօնը հասարակական շարժման, մինչդեռ ազգութիւնը երկրորդական, ստորադաս դեր ունէր կատարելու:

Հայ սօցիալիստ յեղափոխականներին Հ. Յ. Դաշնակցութիւնից բաժանող իսկական պատճառը ոչ թէ տարակարծութիւնն էր սօցիալիզմի մասին, այլ միանգամայն տարբեր տրամադրութիւնն ու մտայնութիւնը ազգային դատի շուրջը: Հայ սօցիալիստ յեղափոխականների ոգին և մղումները ուսական էին:

Այդ պատճառով նրանք շատ աւելի հարազատ կայ էին զգում ուսանների, քան թուրքահայերի հետ:

Եւ այսօր էլ տակաւին նրանց մէջ կարծես անյազթելի ուժգնութեամբ բարախում է սուսական սիրտը: Այսօր էլ տակաւին սուսական դօրութեան հմայքը կաշկանդում է նրանց քաղաքական միտքը և թոյլ չի տալիս նրանց հաշուել հայ ազգի ուրոյն և անկախ ճակատագրի հետ:

Միայն իրերի երկաթէ ընթացքը և գէպերի ճնշող ոյժը կարող են հայ սօցիալիստ-յեղափոխականներին ևս հարկազրել ընդունելու ազգային տեսակէտը, ազգութեան հրամայական պահանջները և միանգամ ընդմիշտ հրաժարուելու իրենց սուսական նախասիրութիւններից:

X.

Ռ Ո Ւ Ս Ա Ս Ի Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Տարօրինակ պիտի լինէր, եթէ Հ. Յ. Դաշնակցութիւնը, որը ծնունդ էր առել Ռուսաստանում և որի հիմնադիրներն ու ղեկավարները ստացել էին ռուսական կրթութիւն, միանգամայն զերծ մնար ռուսական ազդեցութիւնից:

Մէկ բանով սակայն Հ. Յ. Դաշնակցութիւնը էապէս տարբերուում էր հայութեան այս կամ այն հատւածի մէջ ծագած քաղաքական կազմակերպութիւններից: Այդ այն է, որ, մինչ՝ բոլոր հայ քաղաքական կազմակերպութիւնները հատուածային ընդթուէին և գործում էին միայն մի որոշ, սահմանափակ շրջանում, Հ. Յ. Դաշնակցութիւնը, ընդհակառակը, հայ քաղաքական դասի շնորհիւ, համազգային և համասարած մի հոկայ կազմակերպութիւն էր:

Այստեղ մի ընդհանուր գործի շուրջը համախմբւած էին շարունակ և՛ ռուսահայեր, և տաճկահայեր, և ամերիկահայեր, և եգիպտահայեր... Սև դրանք բոլորն էլ իրենց քաղաքական ձրդատումների, զգացումների և գաղափարների հետ միասին բերում էին կազմակերպութեան մէջ նաև օտար հովեր, օտար ներշնչումներ, օտար մտայնութիւններ, որոնք սակայն, հաղամարտ լինելով, չեզոքացնում էին իրար փոխադարձաբար:

Օտար ազդեցութիւնները, եթէ երբեմն այս կամ այն պատճառով զգալի էին գառնում, ամեն պարագայի տակ չէին կարող տեսականօրէն իջխել Հ. Յ. Դաշնակցութեան մէջ, սրովհետև միշտ կար կամ առաջ էր դալիս այնտեղ հակակշիռ մի ոյժ, որը ի վերջոյ վերականգնում էր խախտւած հաւասարակշռութիւնը:

Իսկ հաւասարակշռութիւնն պահողը կուսակցութեան մէջ ազգային դատն էր:

Այդ պատճառով օտարամոլ և հայութեան անհարազատ այն տարրերը, որոնք պատահաբար կամ թիւրիմացաբար էին մտած լինում Հ. Յ. Դաշնակցութեան մէջ, չէին կարող երկար մնալ այնտեղ և հարկադրւած էին լինում վաղ թէ ուշ հեռանալ կուսակցութեան շարքերից:

Անջատումը կատարւում էր թէ խմբական, թէ անհատական ձևով:

Խմբական անջատման երկու դեպքերի մասին մենք յիշեցինք անցեալ տնդամ: Իսկ անհատական անջատումներ տեղի էին ունենում շարունակ՝ Հ. Յ. Իաշնակցութեան սկզբնաւորութեան օրից մինչև մեր օրերը:

Բաղարական, գաղափարական մօտիւններով անջատւողները լինում էին կամ ծայրայեղ աջից կամ ծայրայեղ ձախից: Չախթեից հեռացողները գտնում էին, որ Հ. Յ. Իաշնակցութիւնը բաւականաչափ սօցիալիստական չէ և, ընդհակառակը, չափազանց ազգային: Իսկ աջից հեռացողները կործում էին, որ Հ. Յ. Իաշնակցութիւնը չափազանց սօցիալիստական է և, բնդհակառակը, ոչ բաւականաչափ ազգային:

Եւ շատ ուշագրաւ ու բնորոշ է, որ ձախից անջատւողների մեծագոյն մասը, եթէ չտեսն՝ բոլորը, սուսահայեր էին. իսկ աջից անջատւողների ճշշող մեծամասնութիւնը՝ ոչ-սուսահայեր:

Ռուսահայերի նկատմամբ սուսական ուժեղ ազդեցութիւնը անտարակուսելի է անշուշտ:

Ճիշտ է, օտար ազդեցութիւնները, ինչպէս վերը ասացինք, չեզոքացնում էին իրար փոխադարձաբար, բայց մի կողմից՝ Ռուսաստանի բազմաթիւ դերը բովանդակ հայութեան կեանքում, և միւս կողմից՝ սուսահայ ինտելիգենտների գերիշխող դիրքը Հ. Յ. Իաշնակցութեան դեկավար շրջաններում պատճառ դարձան, որ հայ մեծ քաղաքական կազմակերպութիւնն իր երկարամեայ գործունէութեան ընթացքում մի որոշ չափով հրապարակ բերէր սուսասիրական տենդենցներ:

Մինչև 1903 թ., այսինքն՝ մինչև հայ եկեղեցական կալւածների գրաւումը, Հ. Յ. Իաշնակցութիւնը իր բովանդակ ոյժերով ու ձգտումներով ուղղւած էր թրքութեան ու թուրքական իշխանութեան դէմ:

Հակասուական խմորումը ծայր սուաւ 1903 թ. ժողովրդական լայն խաւերի մէջ և ստացաւ տարբերային կերպարանք: Հ. Յ. Իաշնակցութեան կօմիտէները, իրերի երկաթէ հարկադրանքի տակ, անցան մեր ժողովրդի հակասուական շարժման գլուխը: Եւ միայն 1904 թ. Ռայօճական կողովը նւիրագործեց, այսպէս կոչւած, կովկասեան նախագիծը, որով Հ. Յ. Իաշնակցութիւնը հանդէս էր գալիս իբրև Ռուսիայի մէջ գործող և սուսական ուժի մի դէմ կուող մի յեղափոխական-սօցիալիստական կուսակցութիւն. ապա 1904—7 թւերի փութորկայոյզ շրջանից յետոյ վիեննայի ընդհանուր ժողովը եկաւ վերջապէս իր սանկցիան տա-

յու կազմակառուցման նախագծին:

1908 թ., երբ տեղի ունեցաւ օսմանեան յեղափոխութիւնը և Ռուսաստանում յողթանակեց սէպտեմբեր, որի հետեանքով ըսկսեց մի անօրինակ հալածանք Հ. Յ. Դաշնակցութեան դէմ ցարեքի երկրում, կուսակցութեան մէջ կրկին կատարեց մի ուժեղ բեկում: Ծայր աւաւ մի խիստ հակառուսական տրամադրութիւն, որ որոշ ելևէջներով տիրեց մինչև 1912 թ. Բալկանեան պատերազմը:

Այդ շրջանում, որ կարելի է թրջասիրական շրջան անուանել, Հ. Յ. Դաշնակցութիւնը բարեկամական դաշինք կնքեց երիտասարդ թուրքերի կուսակցութեան հետ:

Դա մի շատ նշանակալից շրջան էր, որ կարող էր հիմնովին փոխել հայ ժողովրդի քաղաքական դարգացման ընթացքը, եթէ տեէր աւելի երկար և պահպանէր երիտասարդ թուրքերի կողմից: Սակայն թուրք աւարի առեկութիւնը դէպի հայ ժողովուրդն այնքան էր խորը և անյողթելի, որ անկարելի նդաւ հաստատուն հիմքերի վրա դնել հայ-թուրքական դործակցութիւնը:

Բալկանեան պատերազմի և 1914 թւի համաշխարհային հրդեհի ատեն Հ. Յ. Դաշնակցութիւնն իր աչքերը կրկին յառեց դէպի օսմանի այս կողմը, իսկ 1917 թւի փետրւարեան յեղափոխութիւնն եկաւ ու վերստին ջերմացրեց հայ ժողովրդի, ինտելիգենցիայի և մասնաւորապէս Հ. Յ. Դաշնակցութեան սառած զգացումները հանդէպ Ռուսաստանի: Թւում էր, թէ ցարական սև ուժի մի անկման հետ միասին, չքացաւ նաև այն մղձաւնջային ճնշումը, որով ոռւս պետութիւնը կաշկանդում էր հայ ժողովրդի աղաւ դարգացումը: Թւում էր, թէ ոռւս յեղափոխական դուսակցութիւնները այլևս չպիտի կամենան ստորադաս, հպատակ վիճակի մէջ պահել հայ ժողովուրդը, ինչպէս և այլ տարազգի ժողովուրդները:

Սակայն դէպքերը նորէն մի նոր, մեծ յուսախաբութիւն առաջ բերին հայ ժողովրդի և նրա ղեկավար քաղաքական շրջանների մէջ:

XI.

ՌՈՒՍԱԿԱՆ ԻՍՊԵՐԻԱԼԻԶՄԸ ԵՆ ՆՐԱ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ինչպէս բովանդակ հայութեան, այնպէս էլ հայ քաղաքական ղեկավար աւարների վերաբերմունքը դէպի ոռւսներն ու

Ռուսաստանը մինչև վերջին ժամանակ կրում էր բացառապես ուսմանտիկ բնույթ:

Ճիշտ է, բուռն սոցիալիստական շրջաններին յաճախ հեռանել են սառն վերապահութեան, խորը հիասթափութեան շրջաններ, բայց հաշի վերաբերմունքի հիմքը դեպի սուսը միշտ մնացել է ուսմանտիկական:

Ռուս յեղափոխական կուսակցութիւնները հրապարակ էին նեանել ազգերի համար ազատարար նշանաբաններ, և սուսական մեծ յեղափոխութիւնից յետոյ թուում էր, թէ նրանք պատրաստ էին ամենայն անկեղծութեամբ ու հետևողականութեամբ կեանքի մէջ իրազօրծել այդ նշանաբանները: Այդ կուսակցութիւններից մէկը նոյնիսկ՝ բոլշևիկների կազմակերպութիւնը, յեղափոխութեան առաջին ամիսներին, ազգերի ինքնորոշման խնդրում այնպիսի լայնասիրտ ու անվերապահ դիրք բանեց, որ ամբողջ աշխարհի զարմանքը յարուցեց:

Սակայն, եթէ թողնելու լինենք նշանաբանների և Ֆրազէօլօգիայի աշխարհը և դիմենք իրականութեան, դէպքերի իրական ընթացքին, կտեսնենք, որ սուս յեղափոխական կուսակցութիւններն ըստ էութեան շատ քիչ բանով են տարբերուել ցարական կառավարութիւնից՝ հպատակ ազգերի ազատագրման հարցում: Տարբերութիւնը եղել է իրօք միայն արտաքին, բայց ոչ ներքին երևութեան, բայց ոչ իրական:

Այսպէս, օրինակ, սուս կադէտների, սօցիալիստ-յեղափոխականների և սօցիալ-դեմօկրատ մենշևիկների կառավարութիւնը, որի գլուխն էր կանգնած սօցիալիստ-յեղափոխական Կերենսկին, ինչպէս այդ պարզ երևում է այժմ բոլշևիկների ձեռքով հրատարակուած գաղտնի փաստաթղթերից, իր հաւանութիւնն է տրուել այն իմպերիալիստական դաշնագրին, որ կնքել էր ցարը 1916 թ. անգլիացիների և Ֆրանսիացիների հետ միասին Տաճկահայաստանը բաժանելու մասին: Տարակոյս չկայ, որ անգամ սուս սօցիալիստ-յեղափոխականները և սօցիալ-դեմօկրատ մենշևիկները ոչ միայն տրամադիր չէին կատարեալ ազատութիւն տալու Ռուսահայաստանին, այլ և չէին կամենում բնաւ հրաժարել սուսական յաւակնութիւններից Տաճկահայաստանի նըկատմամբ: Նոյն տենդենցները նրանք յայտնաբերեցին նաև սիւս ազգերի վերաբերմամբ (եթէ չհաշուենք լեհերին):

Այնուհետև, Կերենսկու տապալումից յետոյ, իշխանութեան համար կուտղ երկու կողմերն էլ, թէ բոլշևիկները և թէ հակա-



բօլշիկեան ոյժերը, աւելի նպաստաւոր վերաբերմունք ցոյց չը-  
տւին ուսական լուծից ազատուող ազգութեանց և մասնաւորա-  
պէս հայերի հանդէպ:

Դեմիկինի «հայասիրական» խաղերն այն միտմիտ համոզումն  
էին յարուցել հայ ժողովրդի որոշ խաւերի մէջ, որ «կամաւորա-  
կան բանակը» մասնաւորապէս Հայաստանի նկատմամբ տարբեր  
դիրք ունի բունած: Ետեւրին նոյնիակ թւում էր, թէ Դեմիկինը  
ճանաչում է կամ պատրաստ է ճանաչելու Հայաստանի, տեղամ  
Ռուսահայաստանի անկախութիւնը:

Սակայն ոչ մի կասկած չի կարող լինել, որ իր թիկունքն  
ապահովելուց և բուն ուսական ճակատում յաղթութիւն տանե-  
լուց յետոյ, Դեմիկինն աւելի քան անհաշտ ու մեխնայ պիտի  
լինէր Հայաստանի նկատմամբ:

Այդ պատճառով Դեմիկինի դիւանագիտական ներկայացու-  
ցիչները Պարիզում ձեական պատճառաբանութիւններով մինչև  
վերջը խուսափեցին որևէ պաշտօնական ակտով ճանաչել Ռու-  
սահայաստանի անջատումը Ռուսաստանից:

Դալով բօլշիկները վերաբերմունքին դէպի ուսական լու-  
ծից ազատած ազգութիւնների անկախութիւնը, պիտի ասենք,  
թէ երկու ու կէս տարւայ նրանց քաղաքականութիւնը միանգա-  
մայն ժխտում է նրանց յայտարարած սկզբունքը, որով ճանաչ-  
ում է ազգերի ինքնորոշման բացարձակ իրաւունքը:

Փաստերը ցոյց են տալիս, որ բօլշիկները նախկին ուս-  
ական կայսրութեան մէջ եղած օտար ազգերին իրօք չեն կա-  
մենում Ռուսաստանից միանգամայն անկախ ճանաչել, որ նը-  
րանք ձգտում են այս կամ այն ձևով օտար ազգերի վրին փա-  
թաթել ուսական կամքը, որ նրանք, միայն ազգական անհրա-  
ժեշտութիւնից դրդւած կամ քաղաքական նկատառումներով  
ճանաչում են այս կամ այն ազատագրւած ազգի անկախութիւ-  
նը, և որ վերջապէս որևէ հարեան ազգի անկախութիւնը ճա-  
նաչելու դէպքում էլ նրանք փոխում են միայն կաւի եզանակը  
հարեան ազգի դէմ և ներքին դաւերով ու ազիտացիայով աշխա-  
տում են պայթեցնել իրենց հարեան ազգի անկախութիւնը:

Այսպիսով մենք տեսնում ենք, որ Ռուսաստանում իշխա-  
նութեան համար պայքարող բոլոր կուսակցութիւնների իրական  
ձգտումները ուսական լուծից ազատած ազգերի նկատմամբ  
նոյնն են, թէև տարբեր է նրանց Փրադէօլօգիան, նրանց դորձե-  
լակերպը: Ծիշտ է, կաւի ընթացքում, ընդիմադրական վիճակի

մէջ, նրանք լինում են յաճախ առատաձեռն և լայնասիրտ: Բայց քաւական է, որ նրանք յաղթեն, և պատկերը փոխւում է հիմնովին: Նրանք բոլորն էլ յայտնաբերում են իմպերիալիստական հոլումներ և դառնում են ուսւ աշխարհակալ ժողովրդի ժողովանդ արտայայտիչները՝ ընդունակ ամեն տեսակ սուր միջոցներով, դաւերով ու սադրանքներով սարկացնել հարեան ազգերին:

Ռուս յեղափոխական Ֆրադէօլօգիան անդիմադրելիօրէն հրամայել, գերել, մոլորեցրել է հայ հասարակական միտքը, և հայ քաղաքական շրջանները դիւրութեամբ անձնատուր են եղել այն պարզամիտ հաւատին, թէ ուսւ յեղափոխականը հպատակ ազգերի և մանաւորապէս հայ ազգի հանդէպ էապէս տարբեր վերաբերմունք ունի, քան ուսւ ցարը: Իրերի ջախջախիչ ազդեցութեան տակ այդ պատրանքն ևս այժմ չքացած պէտք է համարել:

Ռուսը, ինչ դրօշակով ու նշանաբանով էլ նա հրապարակ դայ, աշխարհակալ է պատմականօրէն, ամեն մի ուսւ իշխանութեան մէջ, որքան էլ նա սօցիալիստական դունաւորում ունենայ, անխուսափելի կեքողով պիտի երևան գան ուսւ ժողովրդի ազգային ձգտումները, որոնք աշխարհակալական են անպայման:

Այս է այն հրահանգը, որ տալիս է մեզ ուսւ ժողովրդի պատմութիւնը, ուսւ կուսակցութիւնների գործունէութիւնը, ուսւ պետութեան շահը և ուսւ յեղափոխութեան վախճանական ընթացքը: Այս է քաղաքական այն ուէալ տեսակէտը, որով մենք պէտք է ղեկավարենք ճշտելու համար մեր ղիրքը հանդէպ Ռուսաստանի, ուսւ ժողովրդի և ուսւ այլևայլ կուսակցութեանց:

Ռուսական քաղաքականութիւնը, լինի դա ցարական, էսէրական թէ բօլշեիկեան, միշտ եղել է նենդ ու երկդիմի՝ մանր ազգերի նկատմամբ: Նենդ ու երկդիմի է եղել նա միշտ և է այսօր նաև՝ հայ ազգի վերաբերմամբ:

Այս մասին է, որ այսուհետև չպէտք է լինի այլևս և ոչ մի տարակոյս:

## XII.

### ԵՐԷԿ ԵՒ ԱՅՍՕՐ

Ռուսաստանի տարերային և խուճապային փախուստը տաճկական ճակատից 1917 թ., որ ողբերգական վիճակի մատնեց ամբողջ հայ ժողովուրդը, մահացու վտանդ ստեղծելով վերջինիս ֆիլիքական գոյութեան համար, մի մեծ, իր նշանակութեամբ անչափելի իրողութիւն էր, որ կոչւած էր հիմնական յե-

դաշըջում առաջ բերելու թէ հայ ժողովրդական մասսաների և թէ հայ քաղաքական ղեկավար տարրերի հոգեբանութեան մէջ:

Աստիճանարար քայքայում, տարրալուծում, անդամահատում էր սուսական հսկայավիթխար կայսրութիւնը, չքանում էր սուսական անխորտակելի և անխուսափելի կարծած ոյժի հըմայքը, վերատում էր այն կօշմարտին ճնշումը, որին կնթակայ էր հայ ժողովուրդը ուրիշ հպատակ ժողովուրդների հետ միասին սնտեսական, քաղաքական և կուլտուրական հողի վրա: Մէկ խօսքով՝ հայ ժողովուրդի ճանապարհից հեռանում էր իր ազգային ազատագրութեան ամենամեծ թշնամիներից մէկը — սուս պետութիւնը:

Եթէ այս նշանակալից փաստը կատարէր մեր ժողովրդի ֆիզիքական գոյութեան համար աւելի նպաստաւոր պայմաններում, ինչպէս այդ եղաւ, օրինակ, Վրաստանում, անտարակուսելի է, որ և նրա թողած հոգեբանական ազդեցութիւնը պիտի զգացւէր շատ աւելի խորը, սուր և արագ կերպով:

Այսպէս, օրինակ, երբ սուս դօրքը և իշխանութիւնը թողին Վրաստանի սահմանները, վրաց ժողովուրդը խկոյն գտաւ ինքն իրան և ճշտեց իր դիրքը հանդէպ Ռուսաստանի:

Ինչո՞ւ:

Որովհետև վրացիների համար չկար տաճկական կամ թուրքական վտանգ, որ սպառնար նրանց ֆիզիքական գոյութեան և հարկադրէր յուսահատօրէն որևէ կողմից փրկութիւն սպասելու: Վրացիների օրհկաթիւ պայմաններն այնպէս էին դասաւորուել, որ նրանք ոչ մի սուր, հրամայական կարիք չունէին դրսի օգնութեան: Ամենսլաւ կացութիւնը նրանց համար այն պիտի լինէր, որ նրանց թողնէին հանգիստ, իրենց սեփական ոյժերով իրենց բախտը տնօրինելու:

Մինչդեռ հայ ժողովրդի քաղաքական դրութիւնը միանգամայն տարբեր էր վրաց ժողովրդի վիճակից՝ այն օրից սկսած, երբ սուսները թողին Ասորկովկասի սահմանները:

Որևէ համաձայնութիւն թուրք-տաճկական ոյժի հետ անկարելի էր: Որովհետև այդ ոյժը չէր կամենում կամ չէր կարող հաշտուել ոչ միայն հայ ազգի քաղաքական, այլ և ֆիզիքական գոյութեան հետ: Հայութիւնը ստիպուած էր անընդհատ և անհաշտ կռիւ մղել թրքութեան դէմ, այլապէս նրան սպասում էր բնաջնջում:

Իբր սեփական ոյժերով միայն նա անկարող էր ապահովել իր գոյութիւնը, — այնքան անհաւասար էր կոխը:

Այդպիսի պայմաններում նա բնազդօրէն պիտի կառչէր ամեն մի արտաքին այժի, որ կարող էր օգնել 'իբան' կասեցնելու համար թուրք-տաճկական վտանգը:

Թիւրքին զոպսղը պատմականօրէն եղել է սուր: Եւ շատ բնական է, որ թուրքի դէմ մղւող իր օրհասական պայքարի մէջ հայը շարունակէր օգնութեան սրտը յոյսեր տածել սուսի հանդէպ, չնայելով որ վերջինս հետու էր:

Ճիշտ է, օգնութեան ձեռք կաշող էին մեկնել հային և դաշնակից մեծ պետութիւնները, որոնք այսօր աշխարհի բախտն են անօրինուս: Մանաւանդ որ այնքան այդ գիւրին էր նրանց համար, երբ նրանց ոյժերը Անդրկովկասումն էին: Սակայն դժնակիցներն քաջականութիւնն այնքան էր բարդ և, ըստերևոյթին, այնքան հակասական, որ հային չէր ներշնչում կատարեալ վստահութիւն, մանաւանդ որ նրանք նոյնչափ ու թերևս շատ աւելի օգնում էին թիւրքին, տաճկին:

Բացի այդ՝ դաշնակիցները միտնդամայն նոր, անծանօթ ոյժեր էին հայութեան համար: Եւ պէտք էին բարեկամութեան անհերքելի փաստեր, օգնութեան աղաղակող ապացոյցներ 'ըրբանց կազմից, որտէսդի հայ ժողովուրդը հանդիսա սրտով իր յոյսը միտնդամայն կտրէր սուսից:

Իսկ այդպիսի փաստեր և ապացոյցներ չկային և չէին էլ կարող լինել, քանի որ հայ ժողովուրդը չէր գիտակցում կամ չէր կամենում գիտակցել քաղաքական այն պարզ ճշմարտութիւնը, թէ սուրբ, որին նա բարեկամ է համարում, անհամեմատ աւելի մեծ թշնամի է դաշնակից պետութեանց համար, քան թուրքը: Հետևաբար բարեկամութիւնը սուսի հետ կասկածելի և վրտանդաւոր էր դարձնում նաև հայի գիւրքը և քաղաքականութիւնը դաշնակից մեծ տէրութեանց աչքում:

Համառոտաբանային պատեքադմի հողերանական աղղեցութեան տակ հայ ժողովուրդը ոչ միայն շարունակում էր թիւրքիմացութեամբ սուսին համարել դաշնակիցների բարեկամը, այլև ի վիճակի չէր որևէ ընարութիւն անելու նրանց միջև, մերժելու մէկի թէկուզ փոքրիկ անմիջական օգնութիւնը՝ օտան ալու համար միւսի մեծ, թէև ոչ անմիջական աջակցութիւնը:

Եի այսպիսի կացութեան մէջ, երբ հայ ժողովուրդը մէկ կողմից՝ գտնւում էր արտաքին կործանարար ոյժի շարունակա-

կան անեղ ճնշման տակ և միւս կողմից՝ արտաքին օգնութեան հրամայական կարիք էր գոռւմ, անկարելի էր հայ քաղաքական մտքի ազատ, անկաշկանդ ու անկախ զարգացումը, նրա կատարեալ ազատագրումը դանազան «պատժական» օրինատացիաներից և անվերապահ որդեգրումը միակ նպատակայարմար ու տեւական օրինատացիայի— հայկական օրէնտացիայի. Մակայն մեր երկամեայ անկախ քաղաքական գոյութիւնը և մեր ազգային ազատագրական պայքարը, որ մենք հարկադրւեցինք մղել գրեթէ միայն մեր սեփական ոյժերով, չէին կարող խոր տկօսներ չփոքել մեր հոգու մէջ:

Մեր զիտակցութեան ստորերկրեայ ծալքերում աննկատելիօրէն կատարւում էր ինքնամփոփման մի պրօցէս, որը մի օր, երբ ուսաները նորէն եկան իրենց ծանր թաթը դնելու մեր սուսերի վրա, պիտի հիմք դառնար մեր քաղաքական մտքի բիւրեղացման և ինքնորոշման համար: Եւ եթէ ոտ սների հետնալը Անդրկովկասից սկիզբն էր այդ պրօցէսի, կարելի է համարձակօրէն սպել, թէ նրանց այժմեան վերադարձը դէպի մեր սահմանները պիտի լինի վախճանը այդ պրօցէսի, որով վերջ է դրւում մեր քաղաքական անվերջ որոնումներին, թարխափումներին ու դեգերումներին և մեր ազգային քաղաքական միտքը, բոլորելով իր զարգացման սկզբնական շրջանը, դուրս է գալիս իր սեփական ուղիի վրա և դառնում է ինքնուրոյն և անկախ:

Երկու և կէս տարի անօջ, երբ ուսաները խուճապային թափով թողին մեր երկիրը և մենք «կամայ բաժանուցինք մեր վաղեմի «բարեկամներից», և այժմ, երբ այդ նայն ուսաները մեր սահմաններն են բաղխում, — սրբան մեծ, անհաւատալի լինելու չափ մեծ փոփոխութիւն մեր հոգու, մեր վիճակի և մեր փոխյարաբերութեանց մէջ:

Որպէս բարեկամներ բաժանուցինք, որպէս թշնամիներ ենք հանդիպում:

Ռուսը մնացել է իրօք նոյն ռուսը, իր աշխարհակալ ձրգտումներով, իր ազդասերժ մտայնութեամբ, իր օտաբակեր տրամադրութիւններով:

Նա շարունակում է նայել մեզ վրա, որպէս իր երէկւայ սարուկի վրա, որը յանդգնել է ապստամբել նրա դէմ և որին պէտք է ենթարկել նախկին լուծին:

Իսկ մենք...

Միթէ նոյնն ենք:



Մենք, որ երէկ դառնութեամբ էինք բաժանուած մեր սարը-  
կական վիճակից և քաղցրութեամբ երազում հիւսիսային օտար-  
ների լուծի մասին, այսօր զգում ենք մեզ ազատ ու անկախ և  
ուենենք ազատ ու անկախ լինելու կուռ գիտակցութիւնն ու  
կամքը:

Այսօր մենք գտել ենք մեզ, ճանաչում ենք մեր ուժը և  
հպարտ ենք մեր ուժով, որովհետև նա է մեր միակ փրկութիւ-  
նը:

Այսօր մենք կարիք չունենք այլևս Հիւսիսից օգնութիւն  
սպասելու:

Այսօր մենք, ընդհակառակը, կարիք ունենք, որ Հիւսիսը  
մեզ հանդիստ թողնէ, մեզանից հեռու մնայ:


Այսօր մենք վախենում ենք Հիւսիսից, որովհետև մենք  
անկախ ենք և շատ թերահաւատ, կասկածամիտ դէպի մենք մի  
ոյժ՝ որ գալիս է մեր դռները քաղիւսելու: Աւելի ևս դէպի մի  
ոյժ, որ երէկ մեր տէրն էր և որ այսօր էլ չի հրաժարւել տա-  
կաւին իր՝ տիրոջական յաւակնութիւններից: Այդպիսի հարկանի  
առաջ մեր դռները պիտի պինդ փակենք և միշտ արթուն մնանք  
ոտքից մինչև գլուխ սպառազինւած, որպէսզի յանկարծակիի չը  
գանք:

Քանի մենք սարուկ էինք և պաւալաստ հալատակ լինելու,  
ուսը մեր «բարեկամն» էր: Բայց այն օրից, երբ մենք դա-  
ռանք ազատ ու ինքնիշխան և կամենում ենք ազատ ու ինքնիշ-  
խան մնալ, ուսը մեր թշնամին է, թեքևս մեր ամենավտանգա-  
ւոր թշնամին:

Համաշխարհային տակնուվրայութեան հետևանքով մեր  
երկրի, մեր ժողովրդի, մեր կեանքի օրեկալի պայմանները փոխ-  
ւելու են հիմնովին: Երկաթէ անհրաժեշտութեամբ փոխւում են  
նաև մեր գոյութեան սուրեկտիւ պայմանները: Իրերի շրջումը,  
կերպարանափոխումը կատարւում է գահավէժ թափով, գլխա-  
պոռոյտ արագութեամբ, մինչդեռ մեր միտքը, մեր գիտակցու-  
թիւնը միշտ յետ է մնում:

Այս դրութիւնը մեծապէս վնասւում է մեր հասարակական  
զարգացման:

Բոլոր արժէքների հիմնական վերագնահատութեան միջոցով  
է միայն, որ մենք պիտի կարենանք բարձրացնել մեր հասարա-  
կական գիտակցութիւնը մինչև մեր իրականութեան թելադրած  
աստիճանը:



Նոր աչքերով մենք պիտի նայինք մեր աշխարհի վրա, որովհետև թէ այդ աշխարհն է փոխւել, թէ մեր դիրքն է փոխւել այդ աշխարհի մէջ, թէ մենք ինքներս ենք փոխւել:

Պէտք է որ մենք լիովին ու պարզօրէն ըմբռնենք այդ փոփոխութեանց բովանդակ իմաստը. ճշտօրէն դնահատենք այդ փոփոխութեանց իսկական արժէքը:

Նոր կեանք է սկսւել մեզ համար, նոր հորիզոններ են բացւել մեր առջև — և պէտք է, որ մենք արժանի լինենք այդ նոր կեանքին և պատրաստ լինենք աչքաբաց ու համարձակ դիմադրուելու նոր հորիզոնները...

